Զ· ՏԱՐԻ 1779 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 8 ՔԱՂՈՑ 4382 – Հ· Տ· 16 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1889 – Ն· Տ· 28 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1889 – ՀԻՋ· 5 ՃԷՄԱԶԻՒԼ ԷՎՎԷԼ 1307 ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԵՒ [illegible]
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
[illegible] ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعلیه‌ده غلطه‌ده نورادونکیان خانده آره‌ولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du Journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ· Պոլսոյ համար	Տարեկան [illegible]	160
»	Վեցամսեայ	80
»	Եռամսեայ	40
Գաւառաց »	Տարեկան	200
»	Վեցամսեայ	100
Օտար երկիրներէ	տարեկան ֆրանք	46
»	վեցամսեայ	28

Դուրսը ղրկուած յօդուածոց [illegible] Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չդարձուիր

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ· ՊՈԼԻՍ, 16 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1889

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԴԷՊՔԵՐ

(Թայմզին Վիեննայի Թղթակցէն, 23 դեկ·)

Ռուս կառավարութիւնն 100.000 րուպլ յատկացուց ի նպաստ չեռնակորացի գաղթականաց ի Սերպիա, որպէս զի կարենան տեղաւորել իրենց նոր բնակավայրերուն մէջ։ Ուրիշ առատաձեռն նուէրներ յառաջագոյն ղրկուած էին Ռուսիոյ համասլաւեան մասնախմբոյ կողմէ և Ցարին անձնական գանձէն, և խնդիր է թէ բոլոր այս նպաստք ինչո՞ւ չգործածուեցան Չեռնակորացիներն իրենց երկրին մէջ պահելու և սնուցանելու սովի ժամանակ, և ընդհակառակն զանոնք գաղթեցնելու սահմանեցան։ Ըստ վերջին լրոյ, ի Սերպիա գաղթած են 7,452 Չեռնակորացիք, որոց 2,500ը պատերազմիկ կորովի մարդիկ են։ Շատ ապուշ պէտք է լինել չհասկնալու համար թէ այս մարդիկ օր մը շարժման մէջ կրնան դրուիլ համասլաւեան հրամանաւ մը։ Չեռնակորացի կառավարութիւնն որ կը գանգատէր թէ չի կրնար պահել և սնուցանել այս խղճալի լեռնականներն, ո՛ և է կերպիւ միջոց գտած է սակայն ընտիր հրացաններ և մեծաքանակ փամփուշտներ անոնց տալու, և ուրիշ հետաքրքրաշարժ պարագայ մը սա է թէ գաղթականներէն շատեր կ՚ըսեն թէ իրենց խստիւ հրաման տրուեցաւ Սերպիա գաղթել, և իրենք կամայ ակամայ հնազանդեցան։

Աւստրեան լրագիրք այս իրողութիւններն արձանագրելով, կ՚եզրակացնեն թէ չեռնակորեան գաղթականութիւնն ի Սերպիա՝ զոր ռուս լրագիրք իբրև մարդասիրական գործ մը կը նկատեն, իրօք հեռանկատ քաղաքական նպատակ մ՚ունի։ Միւս կողմէ, Չեթինեէ լուր կուգայ թէ անհամաձայնութիւն ծագած է Նիքոլա Իշխանին և իւր փեսին՝ Գարաճորճեւիչեան Փեօտր կամ Փիէռ Իշխանին միջև։ Այս վերջինս Ռակուզա գացած է, և իւր կուսակիցք կ՚ըսեն թէ իբրև սերպիական գահուն թեկնածու իւր իրաւունքներէն չէ հրաժարած։ Կը կարծուի թէ Նիքոլա իշխան փափաք յայտնած է որ իւր փեսայն հրաժարի այն ամեն իրաւունքներէն, և փեսայն ճնշումէ զերծ մնալու համար իտալեան հողը քաշուիլ նախամեծար գտած է։ Նիքոլա Իշխան իւր փեսէն աւելի ճարպիկ և կարող մարդ է, բայց համակրութիւն չի վայելեր ի Սերպիա, ուր Գարաճորճեւիչեան իշխանն ունի շատ բարեկամներ։

Փեշթէր Լլոյտ յօդուած մը կը հրատարակէ՝ մերկապարանոց ցոյց տալով ռուս գործակալաց մեքենայութիւններն որք կը գործեն ի Պոսնա-Հերսէք, և Վիեննայի Թայմզի ուշադրութիւն կը հրաւիրէ նոյն նպատակաւ սերպ լրագրութեան ժամանակէ մ՚ի վեր հրատարակած գրգռիչ յօդուածներուն վրայ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Թայմզին Փարիզեան Թղթակցէն, 23 դեկ·)

Երեսփ· Ժողովը, կարճ և հանդարտ նիստի մը մէջ, շնորհեց ելմտական նախարար Պ· Ռուվիէի խնդրած վարկը՝ Պետութեան ձեռամբ տարի մը շարունակելու համար լուցկիի Րէժին։ Կ՚երևի թէ Ֆրանսացիք պիտի շարունակեն ուրիշ ազգերէն տասնապատիկ աւելի սուղ գնել իրենց լուցկիներն, որք տեսակին մէջ յոռեգոյն են ապաքէն։ Լուցկիներ որք ի Ռուսիա մէկ սանթիմի կը վաճառին, և որոցմէ քանի մը հատ ցուցուց ինձ բարեկամ մը, լաւագոյն են քան ասոր ի Ֆրանսա 15 սանթիմի գնուածները։ Ֆրանսայի մէջ Պետութեան սովորութիւնն է իւր մենավաճառ եղած ապրանքները ծախել շատ սուղ գնով, և լուցկիի մասին այս առաւելութենէն հրաժարելու երևոյթ չունի։ Դիտելի բանն այն է որ Երեսփ· Ժողովոյ մէջ վիճաբանութիւնն, որ վտանգ կ՚սպառնար Պ· Ռուվիէի, ընդհակառակն շատ հանդարտ վերջացաւ, գրեթէ առանց ճառախօսութեան։

Ասոր բացատրութիւնը սա է թէ տենդայոյզ գործունէութենէ մը ետքն այժմ հանդարտութիւն կը տիրէ ամեն կողմ։ Տարւոյս յունուար 6 էն ետքն յուզման ու գրգռութեան երկարատև շրջան մը բացուեցաւ։ Յունուար 27 ին Զօր· Պուլանժէ Փարիզէ երեսփոխան ընտրեցաւ, Պուլանժէականք ցոյցեր ըրին, Պ· Ֆլոքէի դահլճէն ինկաւ, Երեսփ· Ժողովոյ մէջ գայթակղալից տեսարանք իրարու յաջորդեցին, Զօր· Պուլանժէ փախաւ, գաւառային ընտրութիւնք կատարուեցան, յետոյ խորհրդարանական ընտրութիւնք, և նոյն միջոցին Արուեստահանդէսը տեղի ունեցաւ։ Այս ամեն դէպքեր ազգն յարատև տենդի մը մէջ պահեցին, որ երբեմն բուռն տագնապներ ալ ունեցաւ։ Եւ արդ, յոգնած ճանձրացած ազգն հանդարտութիւն կը խնդրէ։ Ջիղերը թուլցած են։ Երեսփ· Ժողովոյն մէջ, կամ փողոցներուն մէջ, այլ ևս գայթակղալից տեսարաններու չենք հանդիպիր։ Պուլանժէականք մերթ ընդ մերթ հեռաւոր տեղեր ժողովներ կ՚ընեն, բայց մարդ չի հետաքրքրիր իմանալու թէ ի՛նչ կ՚ըսեն և ի՛նչ կ՚ընեն։

ՓՈՐԹՈՒԿԱԼ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Ի հարաւ-արևելեան Ափրիկէ փորթուկեզ գաղթավայրը կը տարածին Տելկատօ հրուանդանէն մինչև Տելակոայի ծովախորշն։ Այս սահմանաց մէջ կան առևտրական կայաններ, որոց գլխաւորն է Բիլիման։ Փորթուկեզ ազդեցութիւնն աւելի դէպ ի ներս չէ ծաւալած։ Զամպէզի գետին վրայ Փորթուկեզք ունին առևտրական և զինուորական կայաններ, մանաւանդ ի Սէնա և Թէթէ։ Ի Բիլիման գլխաւոր վաճառականք են Գոմպայի անգլ· հպատակ հնդիկներ, նաև Ֆրանսացիներ, Հոլլանտացիներ և Զուիցերացիներ։ Շիրէ գետին վրայ, որ Նիասա լճէն կը բխի, և այս լճին վրայ, վաճառականութիւնը մեծաւ մասամբ «Ափրիկեան Լճերու անգլ· Ընկերութեան» ձեռքը կը գտնուի, որ Լիվինկսթոնի անունը կրող միսիոնարական ընկերութեան հետ սերտ յարաբերութեան մէջ է։ Արաբ վաճառականներուն յառաջխաղացութիւնը Նիասա լճին հիւսիսային եզերաց վրայ՝ վերջերս մեծ արգելք եղած է անգլ· ընկերութեան վաճառականութեան։

Ծովեզերաց վրայ հաստատեալ փորթուկեզ իշխանութիւնք մինչև վերջին ժամանակներս շատ փոյթ չէին ըներ Շիրէ գետի և Նիասա լճի երկրաց վրայ, և կը շատանային ծանր մաքս առնուլ ներածեալ եւրոպեան վաճառքէն և արտածեալ բնիկ բերքէն։ Ափրիկեան Լճերու Ընկերութիւնը միշտ կը ջանար խափանել փորթուկեզներու սանձումութիւնը Շիրէի և Նիասայի վրայ, և բնիկներուն դէմ, որք Մաքոլոլօ կը կոչուին, իւր իրաւունքները զէն ի ձեռին պաշտպանած է։ Ի մի բան, Անգլիացիք Փորթուկեզներու զինուորական միջամտութեան իրաւունքը չեն ճանչած այն կողմեր։

Փորթուկեզք Ափրիկէի երկու կողմերը, թէ՛ հարաւ-արևելեան և թէ հարաւ-արևմտեան եզերաց վրայ գաղթականութիւններ ունին ի վաղուց անտի, և իրենց իղձն է այս երկու գաղթականութիւնները միացնելով, Ատլանտեան Ովկիանէն մինչև Հնդկային Ովկիանն ափրիկեան անընդհատ տիրապետութիւն մը ձեռք անցունել։ Բայց անգլ· կառավարութիւնն «Հարաւ-ափրիկեան վաճառականութեան Ընկերութեան» վերջերս արտօնութիւն տալով շահագործելու անգլիական Պեչուանալանտի հիւսիսակողմը, մինչև Զամպէզի գետն, և աւելի անդին, այնպէս որ այս անգլ· ընկերութիւն դանակի ծայրի մը պէս կը մնայ Փորթուկեզներուն արևելեան և արևմտեան գաղթականութեանց մէջտեղ։

Ա՛յս է Փորթուկալի և Անգլիոյ միջև վէճին սկզբնապատճառը։ Գժտութեան ուրիշ պատճառ մ՚է Փորթուկեզ իշխանութեանց ծովեզերք իջնող կամ ծովեզերքէն մեկնող վաճառքներէ ծանր մաքս առնուլը։ Կը գանգատին նաև թէ բնիկներուն թոյլտուութիւն կը լինի ընտիր զէնքեր գնելու և կրելու։ Այս վիճաբանութեանց և գանգատանաց մէջտեղ, Փորթուկեզք, խնդրոյ ներքև գտնուող երկրաց վրայ իրենց իշխանութիւնը գործնապէս հաստատելու համար, կրակոտ հաղորդակից մը (զՍերփա Փինթօ) ճամբայ կը հանեն, որ երկրախուզութեան պատրուակաւ երկրակալութիւն կ՚ընէ, և Մաքոլոլները փորթուկեզ իշխանութեան ենթարկեալ ցոյց կուտայ։ Այս մարդուն արարք Սալզպըրի Մարքիզին վերջին ծանուցագրոյ կարևորագոյն մասը կը գրաւեն։

Փորթուկալի և Անգլիոյ միջև այժմեան բանակցութեան կէտ նպատակն պիտի լինի ի հարաւ-արևելեան Ափրիկէ փորթուկեզ ստացուածոց ճիշդ սահմանները գծել, ի նկատի ունենալով Փորթուկեզներուն դարաւոր գրաւման իրաւունքն, ինչպէս և այս երկիրներն առաջին անգամ իրենք գտած լինելու բարոյական իրաւունքը։ Բայց Փորթուկեզներն ալ պարտին գիտակցնել վաճառականութիւնն իւր նորանոր ծաւալմանց մէջ։ Եթէ դարաւոր իրաւունքը Փորթուկալի կողմն է, վաճառականութեան զարգացումը և քաղաքակրթութիւնն ամենէն հեռաւոր երկրաց մէջ արծարծելու պատիւն և առաւելութիւնն ալ Անգլիոյ կը վերաբերի։ Երկու հաւասարազօր Տէրութեանց միջև արժանապատւութեան փափկանկատութիւնը կրնան այսպիսի դիւանագիտական բանակցութիւն մը դժուարացնել, բայց Մեծն Բրիտանիոյ և փոքրիկ ու տկար Փորթուկալի միջև այնպիսի անպատեհութեան մը երկիւղ չկայ։

Ի ՓԱՐԻԶ

Տիրող համաճարակն օրուան խնդիրն է ի Փարիզ, և երևի հեռագրէն իմացան ընթերցողք թէ Ինֆլուէնցան կամ Տանկը սաստկութեամբ ճարակելու վրայ է։ Բայց Տա՞նկ թէ Ինֆլուէնցա, ա՛յս ալ խնդիր մ՚է։ Ֆիկարօ դեկտ· 22 թուով յօդուած մը կը հրատարակէ, որ կարգ մը բժշկային կարծիքներ ի մէջ բերելով, կ՚եզրակացնէ թէ Ինֆլուէնցան Տանկ է կամ անոր մէկ տեսակն։ Որովհետև տիրող համաճարակին վրայ կ՚երևին Տանկի որոշիչ նշանք, տենդ, գլխու պտոյտ, ախորժակի կորուստ, ոսկերաց սաստիկ ցաւ, մանաւանդ ծնկաց ու գլխու և երիկամանց ցաւ, այլոց հանդերձ։ Բայց Տանկը կլիմային համեմատ կը փոխուի։ Սուրիոյ մէջ Տանկը չէ ինչ որ էր ի Հնդկաստան, և բնական է որ ի Ֆրանսա չլինի ինչ որ էր ի Սուրիա։ Տանկը նոյնութեամբ, կամ քիչ շատ փոփոխեալ ձևով ի Ֆրանսա մտած է Եգիպտոսէ և Մարսիլիոյ ճամբով, նաև Սելանիկէ և Կ· Պոլսոյ ճամբով, որք սերտ հաղորդակցութեան մէջ են Փարիզի հետ։ Բայց Փարիզի մէջ շատեր պարզ տաքախտի հարբուխէ վարակեալ են (Կրէփ), ինչպէս կը պատահի ամեն տարի այս ատեն, և օրուան նորաձևութեան համեմատ Տանկ կամ Ինֆլուէնցա կը կարծեն այժմ։ Ռէվիւ տը Մէտըսին բժշկական հանդէսին 1889 օգոստ· 10 ի թուոյն մէջ, Տքթ· Պրէյն, դասախօս Պէրութի բժշկական վարժարանին, Տանկին յետրդայ արշաւանքը գուշակած էր տասն և հինգ շաբաթ առաջուընէ, 50 էջեր գրաւող ուսումնասիրութեան մը մէջ։ Ֆիկարօ կ՚արտագրէ Ֆրանսացի բժշկին սա խօսքը· «Ընդ երկար սահմանեալ մնալէ յետոյ տաք կլիմաներուն մէջ, Տանկն ստուգապէս կը յառաջխաղայ դէպ ի բարեխառն կլիմաներ։ Ա՛հա՛ ծաւալած է Միջերկրականի եզերաց վրայ, Իսքէնտէրունէ մինչև Ափրիկեան Տրիպոլսոյ արևմտեան սահմանները։ Ճէզայիր և Թունուզ անմիջական վտանգի մէջ են, և եթէ գիտենք այս համաճարակին դէպ ի հիւսիս տիրելու հակամէտ, և եթէ ի հաշիւ առնունք արդի հաղորդակցութեանց արագութիւնն, եթէ յիշենք նաև թէ օ՛րպիսի արագութեամբ կարմիր տենդն (Տանկ) Զանզիպարէն Ադէն և Ադէնէ Գոմպայ փոխադրուած է, իրաւունք ունինք ըսելու թէ Տանկը մեր դռներն հասած է։ Ողջապահիկ միջոցներ ձեռք առնելու համար սպասե՞նք որ մեր երկիրն ալ արշաւէ»։

Ինչ որ ի Կ· Պոլիս, ի Սուրիա, ի Սելանիկ և յԵգիպտոս Տանկ է, այս սահմաններէն յետրդայ արշաւելուն պէս ուրիշ բան մը չի կրնար լինել անշուշտ։ Բայց «Ինֆլուէնցա»ն աւելի քաղցրահնչիւն և նուազ ահարկու բառ է քան «Տանկ»ն, որ խորթ կը հնչէ եւրոպեան ականջներու։

Պ· ՍԹԷՆԼԻ ԵՒ ԷՄԻՆ ՓԱՇԱ

Եգիպտական Մոմպասա կառավարական շոգենաւը Զանզիպար հասաւ դեկտ· 21ին։ Նորոգութիւններ կրելէ ետքը, որք հինգ օր պիտի տևեն, ի Մոմպասա պիտի առնու 99 սպիրբ և 133 կիներ և տղայք, Էմին փաշայի հետևորդք։ Մոմպասա փոքր շոգենաւ մը լինելով, չպիտի կրնայ առնուլ զՊ· Սթէնլի և իւր եւրոպացի հետևորդներ, որք դեկտ· 18/30ին անգլ· Թըրթեառ շոգենաւով պիտի մեկնին, Դահիրէ և անտի յԱնգլիա երթալու համար։

Էմին փաշա թէև ապաքինելու վրայ է, բայց տակաւին ի Պակամոյօ մնալ հարկադրուած է։ Զինք դարմանող անգլիացի վիրաբոյժ Պ· Փարք, Պ· Սթէնլիի նամակաց մէջ գովեստիւ յիշուած բժիշկը, սաստիկ տենդէ բռնուած է։

Իբր թէ Էմին փաշայի ցաւերն իրենն չլսուէին, անգլ· լրագիրք կը հրատարակեն 1889 օգոստ· 31 թուով Պ· Սթէնլիի մէկ երկար նամակն առ հազարապետ Վինթըն։ Պ· Սթէնլի խստիւ կը քննադատէ Էմին փաշային վարմունքն, անորոշ և կասկածելի ընթացքն, որով իւր գործը չփրկելէն զատ աւելի դժուարացուցած է, և ամիսներով զինք ի զուր յոգնեցուցած է երկար պտոյտներով։ Կը կարծէինք թէ, կ՚ըսէ Պ· Սթէնլի, Էմին փաշա ընդարձակ երկրի մը կառավարիչն և հրամատարն է, և իւր իշխանութեան ներքև մեծ ոյժ մ՚ունի, հլու ժողովուրդ և զօրագունդ։ Բայց քանի մ՚ամսուան զարմանօք իմացանք և տեսանք թէ հինգ տարիէ հետէ Էմին փաշա իւր ձեռաց ներքև ո՛չ երկիր, ո՛չ նահանգ, ո՛չ կառավարութիւն, ո՛չ զօրք ունեցած է։ Անոնք որ իրեն կը հնազանդէին, իւր սիրոյը չկորսնցնելու համար միայն կը հնազանդէին, բայց քիչ մը զօրութիւն և կորով ցոյց տալուն պէս, զօրքերն իրեն դէմ կ՚ելնէին և զէնք կը բանեցնէին ու կը նախատէին։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ

Փարիզ, 26 դեկտ· —Թան կ՚ըսէ թէ Ֆրանսա կ՚առաջարկէ եգիպտական առանձնաշնորհեալ պարտուց տոկոսին զեղչումէն աւելնալիք գումարին մէկ մասն յատկացնել եգիպտական բանակին ստուարացնելու, նոյն համեմատութեամբ նուազեցնելով անգլ· զօրաց թիւը։

—Փեթերսպուրկ, 26· —Կայսերական պահակազօրաց հանդիսին ատեն հրամանատարը կարդաց Ցարին հեռագիրն, որով ցաւ կը յայտնէ անհանգստութեան պատճառաւ այս զօրահանդէսին ներկայ չգտնուելուն համար։ Զօրահանդէսէն ետքն, Անիչքովի պալատան մէջ, հացկերոյթ մը տրուեցաւ ի ներկայութեան Կայսրուհւոյն։

—Պեռլին, 26· —Իրազեկ ակմբոց մէջ տեղեկութիւն չկայ այն զրոյցի վրայ թէ Սաքս-Գոպուրկի դուքսն իրաւարար ընդունուեր է անգլօ-փորթուկեզ խնդրոյն համար։

—Լիզպոն, 26· —Անգլ· լրագիրք, Պրականցայի արքայական տան (Փորթուկալի) դժուար կացութիւնն յիշելով, կը յուսան թէ, հակառակ այս դժուարութեանց, Փորթուկալ պիտի կարենայ գոհացում տալ Անգլիոյ իրաւանց։

—Հռոմ, 26· —Առաջիկայ շաբթուն սկիզբը Պերլինէ կը սպասուին ամեն տեսակէ և ամեն աստիճանէ բազմաթիւ գերման սպայք, որք իրենց կառավարութեան կողմէ տրուած արձակուրդով Հռոմ կուգան իտալերէն սորվելու։

—Լէմպէրկ, 23· —Փեթերսպուրկի ռուսերէն կառավարական լրագիրն առաջարկած էր յԱրևելեան Սիպերիա ընդունիլ օրթոտոքս Կալիչիացիներն, որք իրենց երկրէն կը մեկնին, որպէս զի այս սլաւ տարր յԱմերիկա գաղթելով բոլորովին չկորսուի։ Այս գաղափար մեծ ընդունելութիւն կը գտնէ աստ (ի Լեմպերկ, մայրաքաղաք Կալիչիոյ կամ աւստրիական Լեհաստանի)։ Մասնախմբեր կը կազմուին այս գաղթականութիւնը դիւրացնելու համար։

—Օտեսա, 23· —Պարսկաստանի վերջին սուրհանդակը լուր կը բերէ թէ Վեհ· Շահին նախաձեռնութեան ներքև, դատական կարգի մէջ երկու մեծ բարենորոգմունք ի գործ դրուած են։ Քաղաքային դատերու մէջ, Նափոլէոնեան օրինագիրքը տիրող օրէնքը պիտի լինի։ Զինուորական դատերու մէջ, աւստրեան օրինագիրք։ Հին կուսակցութեան ներկայացուցիչք Մոլլաներուն հարցուցած լինելով թէ կրօնային օրէնքը չի՞ հակառակիր այս օտար օրինագրոց ընդունելութեան, Մոլլաները պատասխանեցին թէ այնպիսի հակառակութիւն մը չեն տեսներ, պայմանաւ որ Վեհ· Շահը կանոնաւորապէս վճարել տայ ամեն կար-

---

—) 35 (—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՄԱՌԻ

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԴՐԱԽՏ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԺԵՌԹՐՈՒԻՏ

Համբերութեամբ սպասեց նպաստաւոր վայրկենին։

Բայց Սէլէսթ այնքա՛ն բարեսիրտ էր եղած իրեն նկատմամբ, որ խղճի խայթ կ՚ունենար զայն այնպէս խաբելուն և այդ կնոջ իր վրայ ունեցած վստահութիւնը չարաչար գործածելուն համար։

Աշխատութեան մեծ սրահին մէջ, Թուղթ, գրիչ և մելան կուտային յիմարուհեաց որք տարօրինակ նամակներ կը գրէին ու այլանդակ պատկերներ կը նկարէին։ Ի ձեռին ունինք այդ նամակներէ ու նկարներէ մի քանի՛ն զորս կարդալով ու դիտելով խենդութիւն կուգայ մարդուս վրայ, բայց խնդալու փափաք ո՛չ բնաւ։ Այդ անկապակցութիւնք այնքա՛ն լաւ կ՚ապացուցանեն թէ հեդ տրամներու հանդէպ կը գտնուինք, կեանքէ տարագիր· անմխիթար կենդանիներու, որք երբեմն սիրած ու տառապած են, անբաղդութեան յետին աստիճանին հասած· խեղճեր որոց սրտերը գուցէ երբեմն լցուած էին ազնուագոյն ցանկութիւններով, ամենաբարձր փառասիրութիւններով և ամենախիստ առաքինութեամբ։

Այդ սրահին մէջ էր որ Ֆէրնանտ գրեց Սէլէսթի ուղղեալ նամակ մը, լի գորովանօք և երախտագիտութեամբ։

«Տիկին Սէլէսթ, քանի մը օրէ ի վեր ձեզ ստեցի, այնպէս ձևացունելով թէ բնաւ չեմ յիշեր։ Կը յիշեմ, տիկին Սէլէսթ, իմ ախուր եւ սրտաճմլիկ անցեալս, բայց քաջութիւն չունեցայ զայն ձեզ ըսելու և իմ բուն անունս ձեզ յայտնելու։ Այդ անունը ո՛չ ումեք կուզեմ ըսել։ Ամուսնոյս ու զաւակացս կը պատկանի այն։ Պիտի փորձեմ երթալ գտնել զանոնք, ո՛չ թէ անոնց հետ ապրելու համար իմ անցեալ կենօքս, վասն զի ինքզինքս չպիտի ճանչցունեմ, այլ ըստ կարելւոյն անոնց քով մնալու, տեսնելու անոնց երջանկութիւնը, եթէ երջանիկ են, կամ անոնց հետ տառապելու համար, եթէ կը տառապին։ Ջանացէ՛ք, տիկին Սէլէսթ, որ զիս չհալածեն, չձերբակալեն։ Անհուն դժբաղդութիւն կ՚ըլլայ ինձ համար։ Կը վստահեցունեմ զձեզ թէ ես յիմար չեմ։ Կրցածիս պէս պիտի ապրիմ։ Այս քանի տարիները սովրեցուցին ինձ թէ ինչ է դժընդակ կեանքը։ Պիտի աշխատիմ։ Ներեցէք ինձ, տիկին Սէլէսթ, այսպէս յանկարծ ձեզմէ բաժնուելուս, ձեզմէ որ այնքան գորով ցոյց տուիք ինձ յաճախ։ Ձեզ չպիտի մոռնամ բնաւ։ Չպիտի մոռնամ ինձ համար ըրածնիդ։ Ներումն կը խնդրեմ։ Կը յուսամ թէ տնօրէնը ձեր հսկողութեան թերութեան չպիտի վերագրէ փախուստս։ Ցոյց տուէք իրեն այս նամակս և ըսէ՛ք թէ ինքզինքս պատսպարելու համար ստիպուած էի խաբել ձեր վստահութիւնը, որ գէշ բան մըն է։»

Նամակը ծալլեց, պահարանի մէջ դրաւ եւ երեկոյին զայն սպրդեցուց յիմարապահ կնոջ ձեռագործի սապատին մէջ։

Տիկին Սէլէսթ նոյն գիշերն իսկ պիտի գտնէր զայն, կամ ամենաուշը յաջորդ առաւօտուն։

Երեկոյին, երբ մութը կոխեց, Ֆէրնանտ բացաւ պատին մէջ գտնուած փոքրիկ կանաչ դուռը որ «Հանդարտ Յիմարուհիներու» բակը կ՚անջատէր բանջարանոցէն։

Պարտիզպանն հոն չէր։ Պարտէզն ամայի էր։ Զգուշութեամբ հոն մտաւ։ Բաղդըն ուզեց որ յիմար կանանց ո՛չ մին ներշնչէր զինքը, վասն զի նմանելու ընդնազդումին՝ անտարակոյս անոր պիտի հետևէին, դէպի դուռը պիտի դիմէին և այս կերպով պիտի մատնէին անոր փախուստը։

Ամառ էր։ Պարտիզին եզրերը ցիրուցան ծառեր կային, և պտղատու բազմաթիւ ծառեր որոցմէ արդէն իսկ կախուած էին յառաջիկայ աշնան պտուղները։

Ֆէրնանտ սկսաւ վազել մինչև ծայրը· բայց հոն՝ դուռ չկար բարձր պատին մէջ, որուն երկայնութեամբ կը տարածուէին այգիներ ու պտղատու ծառեր, և որուն վրայ կախուած էին խոշոր ճիւղեր կաղնիներու և փեկոններու որք եռեւի կողմէն կը կազմէին մինչև Օրժ գետակն իջնող դարաստանը։

Բայց վտանգն այնքան ստիպողական էր որ Ֆէրնանտ ժամանակ չ՚ունէր վարանելու։

Ծառոց ճիւղերուն մօտեցեցաւ որք երկաթեայ թելերով իրարու միացուած էին, և առանց դժուարութեան պատին վրայ ելաւ։

Միւս կողմը, տեսակ մը հողակոյտ կար որով պատին բարձրութիւնը կը նուազէր։

Ֆէրնանտ վար կախուեցաւ, անջրպետը կարճեցնելու համար, և ինքզինքը թող տուաւ։

Ձեռքէն քանի մը սկրթուածք միայն առաւ, առանց ուրիշ վնասի։

Սկսաւ վազել, դարաստանէն անցաւ, տատանդական ընթանալով, միակ նպատակ մը ունենալով առ այժմ, այն է կարելի եղածին չափ հեռաւորութիւն մը թողուլ իր և Վօքլիւզի միջև։

Դարաստանին ծայրը կը յանգէր գետակին։ Այդ կողմէն կամուրջ չկար։ Բայց դիւրաւ գտաւ իր բանելիք ուղղութիւնը։ Շատ անգամներ այն կողմէն առաջնորդուած էին զիրենք, և թէպէտ իրենց իմացականութիւնը վերստացող խենդերը շատ տարտամ կերպով կը յիշեն իրենց յիմարութեան ժամանակ պատահած դէպքերը, սակայն Ֆէրնանտ քիչ շատ յիշեց, գետակին երկայնութեամբ յառաջացաւ և կամուրջ մը գտաւ։

Կամուրջէն անցաւ։

Միւս կողմն ալ պուրակ մըն էր։ Իր ի՛նչ հոգն։ Ընդհակառակն զայս նախամեծար կը համարէր։ Աւելի դիւրութիւն կ՚ունենար խուսափելու այն խուզարկութիւններէն զորս պիտի կատարէին անշուշտ, զինքը գտնելու համար։

Վաղուց արդէն գիշերը վրայ հասած էր։ Ֆէրնանտ փոյթ չէր ըներ։ Երկիւղ չէր զգար։ Ի՞նչ բանէ պիտի վախնար։ Կանգ առաւ պահ մը հանգստանալու համար։ Ուշադրութեամբ մտիկ ըրաւ ապահով ըլլալու համար թէ զինքը չէին հալածեր։ Ո՛չ մէկ շշուկ լսեց։ Սակայն, հիւանդանոցին մէջ, անշուշտ տիկին Սէլէսթ աղմուկ յարուցած էր, եւ պահապաններ ճամբայ ելած ըլլալու էին իր ետևէն։ Անշուշտ մէկը հեռագրատուն վազած էր արդէն եւ ամեն կայարանի ծանուցուած էր իր փախուստը։

Ինչպէս խոյս պիտի տար այսքան վտանգներէ։

Դրամ չ՚ունէր բնաւ։ Ի՞նչ պիտի ընէր ապրելու համար։ Պիտի մուրար։ Աստուած կը պաշտպանէր զինքը։ Դաշտօրէից մէջ պտուղներ պիտի գտնէր։ Ագարակի մը մէջ սպասուհի պիտի ըլլար։ Այս կերպով պիտի յաջողէր, ագարակէ ագարակ, խրճիթէ ի խրճիթ, Սօլօնեը հասնիլ, այնտեղ պիտի իմանար ինչ որ իմանալ կ՚ուզէր։ Իր ընտանեացը պիտի մօտենար։

Շատ լաւ գիտէր թէ իւր պերճութեան ու երջանկութեան մէջ ժամանակաւ զինքը ճանչցողներէն ո՛չ ոք պիտի ճանչնար այժմ։ Ո՛չ իսկ իւր զաւակները, և ո՛չ իսկ իւր ամուսինը։ Ո՛չ, հեդ կնոջ ալիներով ծածկուած այդ դէմքին վրայ, երբ թէ խոշոր պրուածքի մը կնիքը կրէր անդ, Վիլլատօն չ՚պիտի ճանչնար բնաւ նուրբ ու սքանչելի դիմագծերն այնմ զոր այնքա՛ն սիրած էր երբեմն։

Զինքը ամենէն աւելի նեղող բանը Վօքլիւզի հիւանդանոցին հագուստները կրելն էր։

Հիւանդանոցին շրջակայքը՝ խելագարներու միաձև հագուստը ծանօթ էր ամենուն։

Այս էր իրեն սպառնացող միակ վտանգը։

Որոշեց ո՛չ մէկ կողմ հիւրընկալութիւն խնդրել այդ գիշերը։ Ծառի մը տակ պառկեցաւ, ծառուղիէ մը ո՛չ շատ հեռի, բայց ո՛չ ալ տեսնուելու չափ մօտ, եթէ զինքն հալածէին։

Այնտեղ քնացաւ։

Շատ մեղմ գիշեր մըն էր։ Գրեթէ ընաւ ցող չկար։ Առաւօտուն միայն քիչ մը զովութիւն զգալով, արթնցաւ։

Նօթի էր։

Իսկոյն ճամբան ձեռք առաւ։ Ժամ մը քալեց։ Ըստ կարելւոյն մեծ ճամբաներէն հեռու կը մնար։

Արօտներուն մէջ պզտիկ հովուհի մը նշմարեց։ Մանուկը հացի խոշոր պատառ մը կը խածնէր տեղական պանրի կտորով մը, քարի պէս չոր եւ կարծր։

Ֆէրնանտ անոր կողմն յառաջացաւ։

Աղջիկը հետաքրքրութեամբ կը դիտէր անոր մերձենալը։

(Շարունակելի)

գի պաշտօնատարաց ամսականներն և հասարակութեան ընդհանուր սպառման նիւթ եղած բաներուն վրայ մենաշնորհներ չտալ տուր ու առնոր։

—Լոնտոն, 23 դեկտ. — Ազատական ընկերակցութիւնք եռանդեամբ և գործունէութեամբ կը մղին՝ ամենամեծ փայլով տօնելու համար Գ. Կլատսթոնի 80րդ տարեդարձն, որոյ առթիւ շքեղ հացկերոյթ մը պիտի տրուի առ մեծանուն պետն ազատական կուսակցութեան։

—Զանզիպարէ կը հեռագրուի թէ գերման իշխանութիւնն ի կախաղան հանել տուած է՝ Պուշիրիի հետ մէկտեղ՝ նորա երեք գլխաւոր աջակիցները։

ԼՈՐՏ ՍԱԼԶԲՐԻԻ ԾԱՆՈՒՑԱԳԻՐԸ

Ըստ նորագոյն լրոյ, Լորտ Սալզպրրի առ Փորթուկէզ կառավարութիւնն ուղղած ծանուցագրով կը պահանջէ անմիջական պաշտօնանկութիւնն և յետս կոչումն հազարապետ Սերփա Փինթոյի։

Գործին տագնապալից կողմն այն է թէ այս հազարապետ Լիսպոնի կառավարութեան հրահանգաց համեմատ շարժած լինելով, Փորթուկալ չուզեր գոհացում տալ Անգլիոյ պահանջման՝ եւ կանչելով իւր պաշտօնակալը։

Իբրեւ միջոց «Անգլ. հարաւ-ափրիկեան առեւտրական Ընկերութեան» կազմութեան դէմ, Փորթուկեզք 25 միլիոն ֆր.ի անուանական դրամագլխով հիմնեցին «Փորթուկեզ հարաւ-ափրիկեան առեւտրական Ընկերութիւն» մը՝ երեւելի անուանց պաշտպանութեան ներքեւ։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՔ

Ֆրանսա տակաւին պատասխանած չլինելով առանձնաշնորհեալ պարտուց տոկոսին դեղջման խնդրոյն վրայ, եգիպտական կառավարութիւնը, հասարակաց աշխատութիւնը բաժնելու առթիւ, կալուածատէրց վրայ արտավարին երեք ղրուշի յաւելումն մ'ընելու հարկադրուած է։

Այս յաւելումն պիտի ջնջուի երբ Ֆրանսա խնդրուած հաւանութիւնը տայ տոկոսաց դեղջման։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն երէկ իրիկուն Մեծ-Եպարքոս Քեամիլ փաշայի ապարանքը գնաց ի Նշան Թաշ և Ն. Բարձրութեան որդւոյն ամուսնութեան առթիւ շնորհաւորական այցելութիւն տուաւ։

Խառն Ժողովն ի նիստ գումարեցաւ երէկ ի խորհրդարանի Ղալաթիոյ ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և զբաղեցաւ դատաստանական այլ եւ այլ խնդիրներով։

Ժողովն ի միջի այլոց, վաւերացուց Ռոտոսթոյի առաջնորդական ընտրութիւնն, որ արդէն կատարուած էր, յանձին Գեր. Համբարձում եպիսկոպոս Դիմաքսեանի և որոշեց ծանուցանել զայս Ն. Գերապատուութեան, իբրեւ վերջնական որոշում։

Նկատողութեան առաւ Կարնոյ ազգայնոց խնդիրքը որ կրկնուած էր, նորընտիր առաջնորդ Գեր. Գէորգ Ծ. վարդապետի եպիսկոպոսացման համար, և որոշեց որ սպասէ իր նկատողութեան առնուլ Ն. Գերապատուութեան իւր պաշտօնի գլուխն անցնելէն յետոյ։

Ժողովն ստուգեց Սպարթայի քահանային դէմ եղած բողոքներու առթիւ իւր կատարած քննութիւնները, նկատողութեան առնլով հանդերձ այլ եւ այլ պաշտօնական գրութիւններ և որոշեց թէ այդ քահանային բողոքովն անմեղ է և թէ իրեն դէմ եղած բողոքներն անհիմն են։ Միանգամայն որոշեց այդ խնդրոյ մէջ եղած հաշուական մասերու քննութիւնը յանձնարարել Ջիւանիոյ դատաստանական վարչութեան և քահանային Սպարթա վերադարձնել։

Երուսաղեմայ Միաբան և Ժառանգաւորաց վարժարանի տեսուչ Արժ. Տ. Գէորգ Ծ. Վ. Երէցեան, որ Ազգ. Կեդր. Վարչութեան որոշմամբ Ռումանիոյ Հայոց այցելու հովիւ կարգուած էր, մայրաքաղաքս հասաւ ուր մի քանի օր մնալէ յետոյ, պիտի մեկնի ի Ռումանիա։

Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարքն ուղելով վարձատրել Տ. Գէորգ վարդապետի բազում ծառայութիւնները, նոյեմբեր 26ի կիրակին Մայրագոյն Վարդապետի աստիճան տուեր է Ն. Արժանապատուութեան։

Տ. Գէորգ վարդապետին տեղ Երուսաղեմայ Ժառանգաւորաց վարժարանին տեսուչ կարգուեր է Գեր. Տ. Մամբրէ եպիսկոպոս Մարկոսեան։

Գումգաբուի Թաղեցիք ոմանք հարիւր յիսուն ստորագրութեամբ հանրագիր մը մատուցին երէկ Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հօր, խնդրելով որ Մայր եկեղեցւոյ համար Թաղական Խորհրդոյ օրինաւոր ընտրութիւն կատարուի, այժմու առժամեայ Թաղական Խորհրդոյ տեղ։

Ըստ որոշման Քաղաքական Ժողովոյ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրն հետեւեալ շրջաբերականն ուղղեց մայրաքաղաքիս Թաղական Խորհրդոց.

Մեծապատիւ Ատենապետ էֆէնտի
Թաղական Խորհրդոյ

Ինչպէս գիտէք, այս վերջի ժամանակներս Մայրաքաղաքիս մէջ ուրեք ուրեք կարմրախտի և փողացաւի տարափոխիկ հիւանդութիւնք երեւան եկած են եւ Ազգային Կեդր. Վարչութեան Ուսումնական Խորհուրդն ասկէ առաջ շրջաբերական գրութեամբ մը յանձնարարած է Թաղ. Խորհրդոց զգուշական միջոցներ ձեռք առնուլ՝ դպրոցական ուսանողներն պաշտպանելու համար այս հիւանդութեանց դէմ. Հարկ դատելով այս զգուշական միջոցներն շարունակել խնամօք, ըստ որոշման Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովոյ արժան դատեցաք ներկայ շրջաբերական գրութեամբ ինչպէս Մայրաքաղաքիս միւս Թաղ. Խորհրդոց, նոյնպէս և Ձեզ յանձնարարել որ եթէ Թաղիդ մէջ այդպիսի տարափոխիկ հիւանդութեանց դէպքեր պատահին, փութաք անմիջապէս փակել վարժարանն եւ արձակուրդ տալ ուսանողաց, մինչեւ որ հիւանդութիւնն անհետի իսպառ։

Մնամք աղօթարար
Պատրիարք Կ. Պոլսոյ
ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
14 դեկտ. 1889

* *

Կրթական Նախարարութեան կողմէ նոր պաշտօնագիր մը եկած է ի Պատրիարքարան, որ՝ տղայոց տարափոխիկ հիւանդութեանց ճարակման պատճառաւ՝ կը յանձնարարէ հարկ եղածն ի գործ դնել վարժարանց նկատմամբ։

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ողբացեալ Տքթ. Վիչէն Օրմանեանի երկարատեւ հիւանդութեան միջոցին, Ազգ. Հիւանդանոցի բժշկապետի պաշտօնն առժամանակեայ կերպիւ կը վարէր Տքթ. Հինքեարպէյենեան։ Ազգ. փոխանորդարար պաշտօնավարութեան միջոցին, Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը գնահատելով նորա անձանձիր խնամքները, Տքթ. Վ. Օրմանեանի մահուան վրայ, բժշկապետ կարգեց զՏքթ. Հինքեարպէյենեան, որ հմուտ և ճարտար բժշկաց ականաւոր դասուն մէջ երեւելի տեղ մը կը գրաւէ արդէն։ Իւր ողբացեալ նախորդ կարեւոր բարենորոգումներ սկսած էր կամ նախագծած էր իւր տեղեկագրաց մէջ, զորս անշուշտ Տքթ. Հինքեարպէյենեան մեծագոյն յօժարութիւն և գիտութիւն պիտի ունենայ կատարելագործելու Ազգ. Հիւանդանոցի նոր շէնքին մէջ, որ գիտական պայմանաց աւելի համաձայն եղանակաւ մը կը կառուցուի և յարգելի բժշկապետին հաստատութեամբ՝ առաջնակարգ տեղ մը պիտի գրաւէ անշուշտ մայրաքաղաքիս նմանօրինակ հաստատութեանց մէջ։

Այս շինութիւն ձմրան եղանակին մէջ կը շարունակուի անընդհատ, արդէն կառուցեալ շէնքերուն ներքին մասանց պակասներն ամբողջացնելով, և կը յուսացուի որ, շնորհիւ ազգասէր հասարակութեան առատաձեռն նուէրներուն, գարնան մէջ մնացեալ մասանց հիմերը դնել կարելի պիտի լինի։

Այս շաբթու Բերայի Ազգ. Արուեստանոցի քննութիւնք, երկուշաբթէ սկսեալ, ըստ որոշեալ ժամերու կատարուեցան։ Ամեն օր բազմաթիւ քննիչներ ներկայ գտնուած են, դրագէտ, դրասէր, եպիսկոպոս, վարդապետ, Ազնուազունք տիկիններ և օրիորդներ։ Գոհութիւնն ամեն շրթանց վրայ է. գոհութիւնք այն յառաջդիմութեան մասին, զորս աշակերտուհիք ցոյց կուտան ամեն ուսմանց համար։ Խմբագրութիւնս կը խնդակցի Արուեստանոցի յառաջադիմութեանց և այն մասնաւոր եռանդեան՝ զոր աշակերտուհիք ի հանդէս բերած են հայերէն լեզուի մասին։

Քննութիւնք պիտի շարունակուին յառաջիկայ երկուշաբթի և երեքշաբթի, թուաբանութեան, պատմութեան, աշխարհագրութեան ուսմանց և ֆրանսերէն լեզուի վրայ։

ՊԷՅՔՕԶԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Ի Պէյքօզ Թրինովայի գաղթականաց տրուած գետնոյն համար Հայոց Պատրիարքարանը մնդած էր թէ Հայոց գերեզմանատուն է, և այդ առթիւ նախնական քննութիւնք կատարուած էին։

Արդ, կ'իմանանք թէ այդ խնդրոյ առթիւ վերստին քննութիւնք պիտի կատարուին, որովհետեւ Հայոց Պատրիարքարանը բողոքած է նախնական քննութեամբ տրուած որոշման դէմ։ (Հայրենիք)

ՄԱՍԻՍ
ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍԻ դեկտ. 15ի թիւը հրատարակուեցաւ այսօր և կը պարունակէ Ազգային տեսութիւն մը կտակական Յանձնախումբի տեղեկագրին առթիւ, ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ։

Թերթին խմբագրութիւնը Ռուսական կեանքը ծանօթացնելու համար շարք մը յօդուածներ պիտի սկսի հրատարակել։ Ռուս ժողովրդին ազդեցութիւնը Կովկասեան հայոց վրայ շատ մեծ ըլլալով, այդպիսի հրատարակութեան մը կարեւորութիւնը անհրաժեշտ համարուած է։ Մասիսի այս թուոյն մէջ ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ կը հրատարակէ առաջին յօդուած մը Ռուսական ազգին միստիքական հոգւոյն վրայ։

Նախորդ թուոյն մէջ հայ Մելիք Ճէվահ պէկի վրայ տրուած հետաքրքրական տեղեկութիւններու մէջ յիշուած էր Եղիշէ առաքեալի պատմական վանքն։ Այդ գրիքէ վիպական առաքեալն անծանօթ ըլլալով, անոր մասին Մասիսի այս թիւը կարեւոր տեղեկութիւններ, Ուսեմդի կեանքէ հետաքրքրական անեկդոտներ կը պարունակէ, գրուած ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆԷ։

Իսկ ԹԱՓԱՌԻԿ «Արիւն հիներ» վերնագրի ներքեւ հոգեբանական փոքրիկ պատկեր մը հրապարակ կը հանէ։

Մասիս կը ծախուի հատը 40 փարայ։ Տարեկան բաժանորդագինն է մէկ մեճիտ Գաւառաց համար քառորդ ոսկի։

ԱԶԳ.
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Մայրաքաղաքիս մէջ տիրող համաճարակ հիւանդութեանց առթիւ խնամակալութիւնս փութացած է փակել Ղալաթիոյ նախակրթարանն, ուր կը յաճախեն դեռահաս մանկունք, այլ նկատելով որ Ղալաթիոյ թաղին մէջ համաճարակը մասնաւոր սաստկութիւն ստացած չըլլալով, Ղալաթիոյ ստորադրէն վարժարանք ալ չեն փակուած, Խնամակալութիւնս աւելորդ նկատած է առ այժմ արձակուրդ տալ Կեդրոնական վարժարանի աշակերտաց, և կը փութայ ծանուցանել թէ դասախօսութիւնք ամենայն կանոնաւորութեամբ կը շարունակուին։

Միայն թէ խնամակալութիւնս որոշած է, ըստ բժշկաց հրահանգին, պահանջել Կեդրոնական վարժարանի ամեն աշակերտներէ որ իրենց տան մէջ համաճարակ հիւանդութիւն չը գտնուելուն հաստատող բժշկական վկայագիր մը ներկայեն Վարժարանին տեսչութեան. վկայագրէն յետոյ պատահելիք հիւանդութեանց տեղեկանալու համար պէտք եղած միջոցներն ձեռք առնուած են։ Խնամակալութիւնս, եթէ հարկ տեսնէ, նոր տնօրինութիւններ պիտի ընէ այս մասին։

16 դեկտ. 1889
Ղալաթիա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԷԿԻ ՍԵԼԱՄԼԸՔԸ

Վեհ. Սուլթանն երէկ Համիտիյէ մզկիթը գնաց, ուր տեղի ունեցաւ Սելամլըքի արարողութիւնը։ Ն. Վեհափառութիւն ուրբաթու աղօթքը կատարելէ յետոյ կայս. պալատ վերադարձաւ։

Կայս. մասնաւոր Արքեպաշտօնատան մէջ կը գտնուէին Բիւթոյ փաշա ու կինը, Հաճի օսմ. դեսպան Ջիայ պէյ, իտալական դեսպանատան խորհրդական Պ. Թուէքինի, առաջին թարգման Պ. Քանիկի, ռուսական դեսպանատան զինուորական կցորդ Պ. Բէյքով ու կինն և գերմանացի, ռուսիացի, իտալացի ու ամերիկացի քանի մը զբօսաշրջիկներ։

Վեհ. Սուլթանին հրամանաւ սեննեկապետ մը այդ պաշտօնատունը գնաց և հարկ եղած մեծարանքներն ըրաւ ներկայից։

ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Բժշկական վարժարանաց տնօրէն Սաիտ փաշա յանձնաժողով մը կազմած է, պաշտօն տալով նմա ամեն ամսագլուխ ի նիստ գումարիլ և քաղաքային բժշկական վարժարանի դասախօսութեան եղանակն աւելի կանոնաւորելու համար հարկ եղած միջոցներուն վրայ խորհրդակցիլ,

Այս յանձնաժողով որ նախընթաց օր առաջին անգամ ըլլալով ի նիստ գումարեցաւ, կազմուած է ընդ նախագահութեամբ Հաճի Նաֆիզ փաշայի և անդամակցութեամբ դոկտորներ Տքթ. Նաիմ, Յալոբ ու Անդրանիկ պէյերու և տեղակալ-գնդապետ Րասիմ ու Խայրէտտին պէյերու։

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Ելմտական նախարարութիւնը հրահանգ ուղղած է ամեն կողմ անմիջապէս ձեռնարկել մայրաքաղաքիս ու շրջակայից արհեստական տուրք գանձման, որովհետեւ անպատշաճ նկատուած է այդ տուրք գանձումն յետաձգել մինչեւ որ ի գործադրութեան դրուի Պաթենթի օրէնքը։

ԿՐԵՏԷ

Թուրք լրագիրք հրատարակած են [illegible] մէկ հեռագիրը որ կըսէ թէ կրետացւոց ընդհանուր ներումն շնորհող կայս. ֆերմանն ի մօտոյ պիտի ամբողջացուի Վեհ. Սուլթանի մէկ իրատէով, որ պիտի ուղղուի առ Շաքիր փաշա, հրաւիրելով զնա մեծ ներողամտութեամբ վարուիլ կղզւոյն այն բնակչաց հետ որք ներման չեն արժանացած։

ԿԱՐՄՐԱԽՏ

Բումէլի Գավաքի և Թարապիոյ մէջ կարմրախտ երեւան եկած ըլլալով, ութ հոգի վարակուած են այդ ախտէն։ Քաղաքապետութիւնն ու բժշկական վարչութիւնն հարկ եղած միջոցները ձեռք առած են։

Գ. ՄԻՏԱՔՍԱՍ

Մայրաքաղաքիս յոյն երեւելիք արծաթեայ թէյաման մը նուիրած են հելլենական դեսպանատան առաջին քարտուղար Գ. Միտաքսասի որ Պերլին կ'երթայ նոյն պաշտօնով։

ՊԷՐՈՒԹԻ ԼՈՒՐԵՐ

Պէրութի լրագիրք կը ծանուցանեն թէ Օսմ. կայս. Պանքայի տեղւոյն մասնաճիւղի տնօրէն Պ. Ստուարդ պաշտօնանկ եղեր է։

Վիլայէթիս կուսակալին նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուեր է քաղաքին կազով լուսաւորման խնդրոյն վրայ խորհրդակցելու համար։ Որոշուեր է որ Պէրութի կազի ընկերութիւնը 615 կազ վառէ որոց համար տարեկան 2500 ոսկւոյ գումար մը պիտի տրուի։

ՀԵԼԼԷՆ ՀԻՒՊԱՏՈՍՔ

Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեայներէն Պ. Արկիրոբուլօ Իզմիրի ընդհ. հիւպատոս անուանուեր է. Ադր. Պոլսոյ հիւպատոս Պ. Փիլօն Եանեայի հիւպատոս անուանուեր է Պ. Կեննատիոսի տեղ որ Հանեա փոխադրուած է. Շքոտրայի հիւպատոս Պ. Պէձօ Ադր. Պոլսոյ հիւպատոս անուանուած է և Սէրեզի հիւպատոս Պ. Բօնկի Շքոտրայի։

ԿՐԿՆԱԿԻ ՈՃԻՐ ՄԸ Ի ՓԻԼԻՊԷ

Փիլիպէէն հինգշաբթի աւուր թուականաւ հետեւեալը կը հաղորդեն.

Երէկ առաւօտ կրկնակի ոճիր մը գործուեցաւ Պարչինաքա գիւղին մէջ որ Մարիձա գետին ձախ եզրը կը գտնուի։ Պուլկար պարտիզպան մը տապարի հարուածով սպաննեց իւր կինն ու զոքանչը։ Այս եղեռնագործութենէն յետոյ սրճարան մը գնաց ուր յաճախորդաց գինի հրամցունելէ յետոյ մանրամասնաբար պատմեց իր ոճիրը։ Յետոյ սկսաւ լալ. տապարին վրայ սպաննելոց արիւնը կը գտնուէր։

Այդ վայրագ մարդը որդեգիր աղջիկ մը ունէր զոր կինն ու զոքանչը կուզէին զինուորականի մը հետ ամուսնացնել։ Պարտիզպանն համամիտ չըլլալով այս խորհուրդին, այլ եւս անոր խօսքը չլսելու համար որոշեց սպաննել երկու կիները։ Ոստիկանութիւնը ձերբակալեց եղեռնագործը։

Եղեռնական ատեանն այսօր պիտի զբաղի Սարրեւարի ոճրագործութեան դատին շարունակութեամբ։

—Սապահը կ'իմանայ թէ վճռաբեկ ատենի պատժական ճիւղին նախագահ Հաճիմ էֆէնտի իւր հրաժարականը մատուցեր է Դատական Նախարար Վեհմ. Ճէվտէթ փաշայի։

—Պալթիկ ծովու ռուսական շոգենաւային ընկերութեան Պետերպուրկ շոգենաւն, յորում կը գտնուէին արձակեալ ռուս զինուորներ, երէկ Պոլսոյ նաւահանգիստը ժամանեց Վլատիվոսթոքէն և առանց կենալու Օտեսա ուղեւորեցաւ։

—Աւստրիական Լոյտի շոգենաւն, որ Թրիեստէէն կուգար, երէկ 108 սնտուկ մավզերեան հրացան բերաւ ի հաշիւ օսմ. կառավարութեան։

—Քաղաքապետութեան կողմէ յատկացեալ երկրաչափներ Սկիւտարի վերջին հրդեհի վայրին քարտէսները պատրաստելու վրայ են։

—Մէրսին շոգենաւն, որոյ նոր անունն է [illegible], բոլորովին նորոգուած ըլլալով, նաւարանի աւազանէն հանուեցաւ։ Այս շոգենաւը գնած են հանքատէր Ահմէտ էֆէնտի և Գարամանեան էֆէնտի։

—Վեհ. Սուլթանն Իմթիազ պատուանշանի շքադրումը շնորհած է նաւահանգստի վերատեսչութեան երկրորդ օգնականի փոխանորդ Թահսին էֆէնտիի։

—Երէկ ժամ 6ին Սալը Բազարի առջեւ ցռկանաւ մը շրջեցաւ հովին սաստկութենէն։ Օսմանեան պահակ շոգենաւէն օգնութեան փութալով ցռկանաւուն մէջ գտնուած երկու նաւաստիներն ազատեցին։

—Հրշէջ զօրաց հրամանատար Զիւչէնի փաշա ինֆլուէնցայէ կը տառապի տասն հինգ օրէ ի վեր։

—Սէլանիկի լրագրոյն մէջ կը կարդանք թէ տեղական կառավարութիւնը յանձնաժողով մը կազմած է, ըստ վերջին որոշման, յետնեալ տուրք գանձման ձեռնարկելու համար։

Գատըգիւղէն հետեւեալը կը գրեն մեզ.

Գատըգիւղի բոլոր դեղագործներէն ստորագրեալ թուղթ մը և երկու իմամներէ կնքեալ պաշտօնաթուղթ մը մատուցուած են այս օրերս գիւղին թաղապետութեան, շնորհակալիք յայտնելով առ Տքթ. Բ. Մինքեան էֆէնտի, որ, չորս տարիէ ի վեր հաստատեալ գիւղին մէջ, անխտիր կը դարմանէ իրեն դիմող ամեն աղքատ հիւանդներն այնչափ անձնուիրութեամբ, որուն օրինակներն հետզհետէ հազուադիւտ կը դառնան։

Յիշեալ Տոքթորին մարդասիրական խնամքներէն օգտուող թշուառաց մեծագոյն մասն հայ ըլլալով, գիւղին մէջ շատեր զարմանօք կը հարցնեն թէ ազգասիրական ընկերութիւնն, որ իւր թատերական վերջին ներկայացման միջոցին իւր համակրութիւնները կը շռայլէր, ինչո՞ւ հրապարակային շնորհակալեաց պատիւը զլացաւ առ Տոքթ. Մինքեան էֆէնտի, մանաւանդ որ աղնիւ Տոքթորն Ընկերութեան կողմէ պաշտօնական գրով հրաւէր ստացած է ասկից առաջ հիւանդները դարմանելու։

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ
ԲԵՐԱՅԻ

Ֆրանսական խումբն այս գիշեր առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ.

ԼԷ ԲՈՒՍԻՆԵՕԼ
LES BOUSSIGNEULS

Գօմէտի Լապիշի, երեք արարուածով որ Բարիզի մէջ մեծ յաջողութիւն գտած խաղերէն է. Ներկայացումը պիտի վերջանայ. UNE TASSE DE THÉ
Օբէրէթով

Վաղը ցերեկ, զեղչեալ գներով,
ԲԱՐԻԶԵԱՆ ԿԵԱՆՔ
(LA VIE PARISIENNE)

Վաղը գիշեր՝
CASQUE DE FER
Թատերերգութիւն.

* *

ՕՐ. ՖՕՆԹԱՆԺԻ ԴԱՏԸ

Ֆրանսական հիւպատոսարանի դատարանն երէկ երկրորդ և վերջին անգամ բազմեցաւ Օր. Ֆօնթանժի կողմէ Պ. Բլոժիսի դէմ բացուած ծանօթ դատը և իր վճիռը տուաւ։

Պ. Բլոժիս դատապարտուեցաւ 600 ֆր վճարելու առ Օր. Ֆօնթանժ, իբր վնասուց հատուցում, ինչպէս նաեւ մէկ ամսական։ Ֆրանսական խմբին տնօրէնը միանգամայն դատապարտուեցաւ դատական ծախուց հատուցման։

Դատարանին կը նախագահէր ընդհ. հիւպատոս Պ. Կոմպ։

ԴԵՂԱԳՈՐԾ
ՊՕՂՈՍ ԷՖԷՆՏԻ ՋԱԼՂԸԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել իւր յարգոյ յաճախորդաց, թէ իւր դեղատունն՝ որ կը գտնուէր ի Պանկալթի Համիտիյէ փողոց թիւ 38, փոխադրուած է դիմացի կարգը 21 թիւ, ուր ըստ առաջնոյն, կը գտնուի, ամեն օր, բայց ուրբաթ և կիրակէէ, Տօքթ. Արիսթիտի պէյ։ 967 1—10

ԴԵՂՕՐԱՅՔ ԹԱՐՄ ԵՒ ԱԺԱՆ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 16 դեկտեմբեր

Օսմանեան Փօնսոլիտէ

Երէկ երեկոյ գոց. (Միաց. Ա. Սէրի)	»	19 14 1/2
Գորալայն գոցուելէն վերջը	»	19 11
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	19 11
Կէս օրին	»	19 11

ԻՍԹԻԳՐԱԶԸ ՏԱՒԻԼԻ

Երէկ երեկոյ	45 14
Այս առաւօտ	45 12
Կէս օր	45 12

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Փոխառութիւն	Ա. Սէրի	37 20
»	Բ. »	22 20
»	Գ. »	19 11

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Օսմնեթ ժէնէրալ	Անգլ. Լր.		4 12
Քրէտի ժէնէրալ	Օսմ.	»	8 30
Պանք տը Պօնա	»	»	7 16
Օսմ. Շանժ է Վալէօր	»	»	4 31
Թրամուէյ	»	»	487 1/2
Բումէլի երկաթուղի		Ֆր.	73 50
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ		»	— —
Բաժնեթուղթ Լոթէրիա			124

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանկնոց	»	87 28
Անգլիական ոսկի	»	110 18
Իմփերիալ	»	90 25
Քրիմից	»	51 10
Ռուսական թղթադրամ	»	8 53
» արծաթ	»	77 25
Մէճ. արծաթ (տարբ)	»	108 10
Վեցնոց	»	103 10
Հինգնոց	»	103 10
Մեթալիք	»	100
Թաշֆէյէ	»	7 30

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Բարիզ, 27 Դեկտեմբեր ժամ 3 վայր. 35 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	87 70
» » 4 1/2 %	105 90
Օսմանեան քօնսոլիտէ Սէրի Դ.	17 65
Օսմանեան երկաթուղի	74 25
» Բէժիի բաժնեթուղթք	—
Պանք Օթօման	533 75
Քրէտի Լիոնէ	691 25
Իտալական Ռանթ 5 %	95 55
Հելլենական 5 %	476 25
Բրիօրիթէ Թիւրք	481 25
Եգիպտական միացեալ	470
Պանք տը Բարի	785
Օսմ. մաքս. տոմսաթուղթ	403 25
Սուէզի ջրանցք	2320
Չէք Լոնտոնի վրայ	25 17·18

Լոնտոն, 27 Դեկտեմբեր ժամ 6 վայր. — երեկոյ

Անգլ. քօնսոլիտէ		97 1/16
Օսմ. »	Սէրի Դ.	17 1/2
»	» » գոց	— —
»	» Ա.	37 3/4
»	» Բ.	22 7/16
»	» Գ.	17 1/2
Փոխառութիւն 1877		101 1/4
Պանք Օթօման		11 5/16
Եգիպտական միացեալ (Ունիֆիյէ)		93 1/4
» առանձ. (պրիվիլէժիէ)		103 1/4
Տայրա Սանիէ		83
Տօմէնիոյ (փոխառ. Դօմէն)		102 1/2
Հելլենական 5 %		93 1/2
Մօնօբոլ »		77 15/16
Ռուսական 1889		93 1/4
Փոխանակութիւն Բարիզի վրայ		25 17 1/2

Վիէննա, 27 Դեկտ. ժամ — վայր. —

Օսմանեան երկաթուղի	37 40
» Բէժիի բաժնեթուղթք	115 50
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	118

Պերլին, 27 Դեկտ. ժամ — վայր. —

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 35
Ռուբլ թղթադրամ	219 3/4
Օսմանեան երկաթուղի	81 50

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Թատերական Ներկայացման ի 25 Նոյեմբեր 1889
Ի ՆՊԱՍՏ
Ազգասիրաց Ընկերութեան Գում-Գափուի Զօրից Թաղից

ՄՈՒՏՔ

Սպառեալ տոմսակներէ գոյաց. հայթ		9165
Նուիրատուութենէ » » »		1637
		10802

ԵԼՔ

Դերասանաց, նուագածութեան, թատրոնի վարձք, տպագրութեան եւ զանազան ծախք		2820
Զուտ հասոյթ պարտ. դրմ.	7682	
Զուտ հասոյթ ապառիկ	300	7982
		10802

Ի Դիմաց Կարգադիր Մասնախմբի
Ատենապետ Ատենադպիր
Ա. Կ. ՍԾԱՏՈՒՐԵԱՆ. Յ. Մ. ԿԻՒՄԻՒՇՃԵԱՆ
Գանձապետ
ԴԱՌՆԻԿ ԳԱՅԱՅԵԱՆ
15 դեկտ. 1889

Ցանկ Նուիրատուաց

Բարեպաշտ ոմն	324
Վսեմ. Յովհ. էֆ. Նուրեան	120
Ազն. Յովհ. էֆ. Յակոբեան	120
Ազն. Տիգրան և Գրիգոր էֆ.ք Կիւմիւշկերտան	108
Վսեմ. Մաթէոս և Սրբիկ էֆ.ք Ունճեան	100
Ազն. Միքայէլ էֆ. Յակոբեան	100
Բարեպաշտուհի ոմն	60
Ազն. Գրիգոր և Տիգրան էֆ. Գարակէօզեան	60
Ազն. Յ. Մ. Գ. էֆ.ք Շամանեան	60
Ազն. Աւետիք եւ Սարգիս էֆ.ք Կիւլպէնկեան	40
Ազն. Խաչիկ էֆ. Պետրոսեան	40
Մեծ. Գէորգ էֆ. Շիշմանեան	40
Մեծ. Յարութիւն էֆ. Շէքերեան	40
Մեծ. Պալիկ էֆ. Գալըընեան	40
Մեծ. Ահարոն էֆ. Մարգարեան	30

20 ական ղրշ. նուիրող տեարք

Ազարիկ էֆ. Գափամաճեան, Աւետիս էֆ. Թէնկիրեան, Գառնիկ էֆ. Գույումճեան, Երուանդ էֆ. Փափազեան, Զենոբ էֆ. Հիսարլեան, Թադէոս եւ Բարթիկ էֆ. Նահապետեան, Կարապետ էֆ. Բուլուճեան, Մամաս էֆ. Զօպունեան, Մանուկ էֆ. Նորեան, Մերովպ էֆ. Յէնէրճեան, Միհրան էֆ. Հէքիմեան, Յակոբ էֆ. Նշանեան, Յարութիւն էֆ. Ալթըբարմաքեան, Յովսէփ էֆ. Սրովեան, Պարոյր էֆ. Մանուէլեան, Տիգրան էֆ. Անուշեան։ Ղազարոս էֆ. Իւթիւճեան 10, Տիրան էֆ. Նազարեան 10, Բարեպաշտ ոմն 10, Ազարիկ էֆ. Մկրեան 5։

Համագումար 1637 ղրշ։

ՎԱՌԱՐԱՆԻՍ ՔՈՎ

Ողջոյն վառարանիս. — Տեսչութեան խնդիր. — Մեր Տնտես աղբարը. —

Հիւսիս Վոսփորէն պաղ պաղ կը փչէ, շոգենաւներն ալ ձրիաբար նաւորդներու տրամադրութեան տակ կը դնեն վերնայարկն, ամարանոցն. հոն կը վազեմ կուրծք և ճակատ հովին դէմ պարզելով։ Սառուցի հաճոյքն ամբողջապէս մարդ կ'զգայ հոն. օդը մաքուր, հովը ցօղաթուրմ, ծովի և անձրեւի փոշիացեալ կաթիլներով. սեւ ծխանին մուխն ալ կուռ կուռ, խաղալիկ հիւսիսակին, իբրեւ փետուր բազմերդ ցցունք երկար գիծ մը կը թողու օդին մէջ, որ իրեն չափ թխագոյն է։ Ամրան յաճախորդներէն ոչ մին կը գտնես հոն, հէք նաւապետը բնաւ ծանօթ մը չունի վերը. իրեն ընտանի դէմքերն, ամենքն ալ, վարի յարկը կը կծկտին՝ գլանիկներու մուխով և շնչառութեանց հոտով թրմեալ խղդուեալ օդին մէջ։ Եթէ իմաստասիրութենէ ախորժէի, քիչ կը մնար որ ըսէի թէ բնութիւնն իր հոլովմանց մէջ, կերպ մը ելեւէջներ կ'ընէ. վերինները կը նետէ վար, և վարիններն ալ կը հանէ վեր. շատեր դրամով հեղձուցիկ օդին մէջ կը թխէ, և շատեր ալ ձրիաբար, իր սառուցով, ցրտով և անձրեւով շինուած ծոցին մէջ կը գգուէ։

Այո, ցուրտն ալ մեր կեանքին մէջ բան մը կը շինէ. իր սառուցիչ բնութեամբը շատերու կենդանութիւնն է։ Ճիշդ այս պատճառաւ մոռցած էի վառարանս։ Բայց որովհետեւ ալ ամեն կողմ վառարանք կը ծխին և սեւ խողովակներ օդին մէջ կ'երկարին, և գիշերուան անդորր ժամերու մէջ կրնան մեր հաճոյական ընկերներն ըլլալ, ուստի կը վառեմ իմս ալ, և ողջոյն տալով կ'ամփոփուիմ իր քով։ Կը մնայ միայն որ հաշուեմ թէ ինչ վառելու է, հանքային ածո՞ւխը թէ չոր ու ջուր փայտեր։— Երկուքն ալ պէտք են փոխն ի փոխն, և այսպէս միօրինակութեան մէկ ձանձրոյթն ալ փարատած կ'ըլլամ։ Միայն թէ առաջնութիւնը փայտերուն պիտի տամ այսօր, կտրելով կրթական հաստ կոճղ մը, որ մեր ամենուս սրտին վրայ պահուած կ'ըլլայ հովին, ձեան և անձրեւին առջեւ։ Այո, գուցէ այսօր վառարանիս տաքութիւնն ու կուռ կուռ կայծերը շատ դիւրաւ չ'ըլլան ոմանց, բայց ինչ ընեմ, նիւթերէս մէկն է կրթականը. և ինչո՞ւ չըլլայ, քանի որ կրթականը մեր կեանքի կենդանութեան մէկ երակն է. և ո՞չ ապաքէն մեր ծնողքն ալ, աղքատ թէ ունեւոր, ուսեալ կամ տգէտ, կրթութեան անուամբ իրենց զաւակները կը յանձնեն Ազգին, այս համոզմամբ թէ պէտք է բան մը ըլլալ այդ զօրութեան տակ, և Ազգն ալ կը հաւատայ թէ, Եկեղեցւոյ մոմերու և կանթեղներու դրամով, չքաւորին՝ եղունգէն ու ակռայէն, ունեւորին հաճոյքէն կըտրուած լումաներովը, բան մը կընէ. Հոս տարին մէկ միլիոնէն աւելի դրամ կը նետուի կրթութեան համար. Ուրեմն կրնամ կրթական փայտերը վառել. ողջո՛յն քեզ, վառարան։

— —

Մեր կրթական խնդրոյն մասին կը մտածեմ որ պէտք է շատ ընտանի ոճով խօսիլ, ուժով դրել քիչ մը, և, ճիշդ կոչուի մայրեւորին պէս, չեչտակի նետելու է տապարը։ Քիչ մը ծանր է այս և բաւական անձնուրացութեան կարօտ։ Փառք Աստուծոյ, վառարանիս քով երկուքէն ալ փոքր ի շատէ կը գտնուի. բաւական է որ քիչ մըն ալ աջ ու ձախ չնայուի ի սէր ազգային մանկտւոյն և աղքատիկ ժողովրդեան մը, որ տեսնելով շատ անգամ իր վարկին, իր լումային և վստահութեան ջարդը, տակաւին մեր դպրոցաց ուսանողներ կուտայ առատ առատ։ Կ՚ըսուի թէ երբ Օգոստինեանց յանդուգն աբեղան կը մտնէր Որմի աւագաժողովը (diète), նոյն թուականի արիագոյն ասպետներէն մին Ժորժ Ֆրանսպերգ, ձեռքն անոր ուսին վրայ ծեծելով կ՚ըսէ. «Աբեղա՛, պատերազմներէ աւելի վտանգաւորագոյն է ճանապարհդ. բայց եթէ համոզեալ ես դու, միայնակ յառաջ անցիր Աստուծոյ կրթնած. Տէրն զքեզ ձեռքէ չթողուր»։ Ես ալ համոզմամբ յառաջ պիտի նետուիմ. փորձանքն ալ փոյթս չէ։

Այս տարի Թաղային դպրոցաց բացմանէ առաջ, Ուսումն. խորհրդոյ մէկ պաշտօնագիրը ծանոյց ամեն Թաղ. խորհրդոյ, որ ըստ նոր բարեկարգութեան հրահանգի, ամեն դպրոց իր տեսուչը պարտի ունենալ, վաւերացեալ իրմէ։ Տեղ տեղ, ուր որ ներքին դիմանանք աւելի զօրութիւն գտան, կրթական հրահանգէն առաջ տեսուչներ դրուեցան։ Բայց թէ Ուսումն. խորհուրդն ալ փոյթ ունեցա՞ւ իր իսկանց ամբողջ գործադրութիւնը, թէ ոչ միայն իր այդ պաշտօնական գրովը նոր դուռ մը բացաւ, ընդ որ այսուհետեւ կարենան դիւրաւ ներս մտնել, սարէն ու սորէն, նոր ու անծանօթ մարդիկ,— ասոր պատասխանը կարելի չէ մէկ բառով տալ, պէտք է քիչ մը մտածել. Ի՞նչ եղաւ արեւմն — անպէտ բեռ մըն ալ դրուեցաւ մեր Թաղ. մնացածներու վրայ՝ կոտրել չկարենալ Ուսուցչաց արժանապատուութիւնը օրէնքի մը արտաքին ձեւոյն տակ. կը շահի՞նք.— իմ խելքս ասոր չի հասնիր։ Եթէ պահանջենք տակաւին որ մեր ուսուցիչք արժանապատուութեան չունենան, մեքենայ մը ըլլալէ աւելի՝ բարոյական չարժէք զօրութիւն չունենան՝ նոյն իսկ մեր կրթարաններու մէջ նըւաստութիւնը զարնելու և հիմէն տապալելու, իրաւ կ՚ըսեմ որ աւելի լաւ կ՚արժէ փակել մեր վարժոցները. «Ուսմանց արժանապատուութեան ճանչցող ուսուցիչներու՝ ազգ մը կեղծաւորութեան և ստորնութեան տղմին մէջ կը թաթխուի». ըսեր գրած էր Մոնթէն. դրամով ալ «ստորնութիւն և կեղծաւորութիւն» չգնուիր։

Ուսուցիչն ոչ միայն մէկ, այլ և քանի մարդիկ պէտք է իր մէջ ունենայ. բարոյականի մարդն, արժանիքի մարդն, արժանապատուութեան մարդն, որ ի հարկին, նուիրական սկզբանց սրբագործութեան համար, պատրաստ ըլլայ զոհել շատ բան։ Եւ այսպէս ենթադրենք թէ ուսուցիչ մը այս ինչ օր իր դպրոցին մէջ յանկարծ տեսնէ մէկն, որ չէ թէ տեսուչ, այլ և հասարակ մարդու մը շնորհքն ալ չունի, և հոգաբարձութիւնը, կրթնած բարձր ու խոշոր հրամաններու վրայ, ըսէ թէ խոնարհեցէք իրեն առջեւ ինչպէս հինները կը ծռէին Որմազդի, պարտաւոր չէ՞ ուժգին բողոք մը, յանուն կրթութեան, նետել Ազգին առջեւ։ Ենթադրենք թէ ուրիշ օր մըն ալ, իբրեւ հայ մարդ, դպրոց մը կը մտնես, ուր առաջին նայուածքով տեսնես սրահին մէջ մարդ մը, հոգաբարձութեան մը անձնանուէր տեսուչն, որ սրահին լայնութիւնն ու երկայնութիւնը կը չափէ, բալթան կունակին, թեւերն երկու քովերէն կախ՝ ժամացուցի ճօճանակներու պէս, ես չե՞ս զարմանար, չե՞ս ըսեր թէ ի՞նչ է այս, ո՞ր ենք, այս մարդը պատշաճից տարրական մէկ հիւլին բանն ալ չգիտեր։ Ասոնք ենթադրութեան տակ իրականութիւններ են, հարիւրէն աւելի տղաքներ, մանչ և աղջիկ, կրնան վկայել։

Ազգ. Կեդր. Վարչութեան զօրութիւնը կը խնդրենք. Կրթական տեսուչն անաչառ ըլլայ, չթողու այս ինչ կամ այն կամ Հոգաբարձութեան Խորհրդոյ, որ «պիտի փորձեմ» ըսելու փորձանքին տակ, թաղի մը սնունդը տանի. հակառակ պարագայի մէջ ո՞վ կը փոխարինէ. քանի՛ներ են որ այսպէս փորձուեցան ու աղքատիկ ժողովրդեան մը սաները փորձեցին։

«Տեսուչ չունինք» ըսելով այս փորձանքները կը պատրաստուին. և անշուշտ ներելի չէ այս։ Եւ ինչո՞ւ այսպէս ըսել. ճիշդն այս է թէ տեսչութեան պէտքը ցայսօր անտես առնըւած էր, ուստի պաշտօնին հետ պաշտօնեայն ալ թաղուն կը մնար։ Տեսչութիւնը կարող ուսուցիչներու համար խօսքի անծանօթ բան մը չէ. մեր մանաւոր վարժարանք, որոց օգուտն ուրանալ կարելի չէ, իբրեւ տեսուչ ունեցան իրենց հիմնադիրները, որք երբեմն ուսուցիչներ եղած էին, և տեսնուեցաւ որ թաղուն գործերու հետ թաղուն կարողութիւններ ալ ունէին այդ մարդիկ։ Զաքարեանի տեսչութեան թուականը՝ Գատը-գիւղի վարժարանաց լաւագոյն թուականն եղաւ. Ճեմարանի վերջին բարենշան աւուրց մէջ, յորս այդ վարժարանն իր ծոցին մէջ կը սնուցանէր Հայուհեաց Ընկերութեան գրագէտ, լեզուագէտ, հրապարակագիր հիմնադիրն իր աննման քոյրերով, և Եղիշէ վարդապետն իր կրակոտ ընկերակիցներով, քահանայ մըն էր տեսուչը, Տ. Խորէն Փէհլիվանեան։ Պոյաճեան մայր վարժարանի լաւագոյն տեսուչն եղաւ երբեմն, Մինաս Ճալլեան, որ երկու տարի առաջ Մագրի-գիւղի մէջ ուսուցիչ մըն էր, երկու տարիէ որ Արամեան դպրոցի մէջ տեսչութեան պաշտօնն ունի և ցայսօր գժգոհութեան ճիչ մը չբարձրացաւ այդ պարկեշտ երիտասարդի դէմ։ Եթէ այդ պաշտօնեայներն իրենց սխալ օրէն ազգին մէջ այդ պաշտօնը գտնէին և շարունակէին, տարակոյս չկայ թէ միշտ լաւագոյն տեսուչներ հասուցած կ՚ունենայինք։ Այս մասնական յաջողութիւնք զմեզ սա եզրակացութեան կը բերեն թէ մեր տեսուչք համեմատաբար այն ատեն աւելի կարող եղած կ՚ըլլան, եթէ ընտրութեան քուէն փորձ և կարող ուսուցչաց նետուի. — Թէեւ ես կեանքիս մէջ և ոչ իսկ մէկ վայրկեան այդ շրջանակի մէջ մնալ կ՚երազեմ.— , Եւ լաւագոյն բան մը չըլլա՞ր եթէ բոլորին Ոսկանէն, Թիւլեանէն, այդ տարիքի ուսուցիչներէն, որ քրտամբ եւ արժանեօք Ազգին ընտրութեանը աւելի փառահեղ են և երախտաւորներ։ Ինչո՞ւ Սամաթիա, իբրեւ բնիկ տեսուչ, չգործածէ զԹիւլեան, որ եթէ չեմ սխալիր, քառասուն տարի մնացած ու եղած է իր թաղին վարժարանները, և որ ուսուցչի հետ բարի և պարկեշտ հայր մըն ալ է, իր ազգը կը ճանչէ, հնութեանց շէնքերու և աւերակաց մէջ կեանք ունի, իր լեզուն ու լեզուներ գիտէ, գիտութեանց տեղեակ է, մեր կեանքը գիտէ, դըպրոցը կը ճանչէ։ Ինչո՞ւ ուրիշ տեղ մը չնստի Ոսկան իր հարազատ կերպարանօքը, որ կ՚աստուածեան ուսուցչութիւն կը ձգէ մեր դպրոցաց մէջ, և յանձն կ՚առնենք, առանց կարմրելու, որ այդ երախտաւորք բարձանք ըլլան, զաւեփայր ըլլան, և միւս կողմանէ ալ անարժանք նստին մեր դպրոցաց մէջ տեսչութեան պաշտօնով, մեր կրթական գործոյն իբրեւ հզօր սպասաւորներ և հոգաբարձութեանց աջ թեւերը։

Բան մը կը յիշեմ, որ, կը թուի թէ, այսօր ալ կը շարունակուի կամ պիտի շարունակուի։ Երբեմն մեր դըպրոցաց ընդհանուր դաստիարակներու ընտրութեան պայմաններէն մին էր ունենալ այնպիսի մարդիկ, որ ունենան խոշոր կազմ, թարմ և ոլորուն պեխեր, ուռած փոր, լա՛ն թիկունք և անժպիտ դէմք։ Ի՛նչ մեծ երանութիւն եթէ գտնէին մեր թաղականները։ Այս պատճառաւ անտեսներն ալ մինչեւ հոն բարձրացան. մեք ունեցանք հատ մը. և անոր զէնքն էր՝ աւելին երկա՛ր կոթն և խոժոռ դէմք մը, ուր խնդութիւն բնաւ նշմարուած չէր։ Տեսչի նախկին փորձերն ալ ճիշդ սակէ կ՚անցնէին, դէթ առ այժմ, գտնելով անոր մէջ սակայն նկատումներ, միջնորդներ և զօրաւոր բարեխօսներ։

Կեդրոնական Ուսումնական Խորհրդոյ ուշադրութիւնը կը գրաւեմ. Եթէ այսօր լռենք, վաղը կը դրուի. իր համարատուութեան մէջ ասոնք ծածկուին կամ ոչ, տարեկան յիշատակներու մէջ ասոնք կը դրուին ճշդութեամբ։ Կրթական Տեսուչն օր մը իր մէկ պաշտօնական թղթին մէջ քանի մը վարժարանաց կանոնումը, բարեկարգութիւնն ուրախութեամբ կը յիշատակէր, և եթէ չեմ մոռցած, ասոնք էին, Խասգիւղի դպրոցները, Սկիւտարի վարժոցներն ու Հալիճիւլ աղջկանց կրթարանը։ Այն օրէն ցայսօր հազար բերանէ լսած եմ որ դիտողութիւն կ՚ընէին թէ ինչո՞ւ չէր գրած Կրթական Տեսչութիւնը թէ ի՞նչ մասնակցութիւն ունեցաւ ինքն այդ վերամանդեան թուականներու մէջ։ Տակաւին այսօր ալ այդպէս է. օրինակի համար, Սկիւտարի ազգ. դպրոցը տարի մըն է որ բարւոք վիճակ մը ունի, կ՚ըսուի թէ մօտ օրերէն Արսլանեանց մըն ալ պիտի բացուի. Տիկին Մասաքեան երկու տարի է որ Գատը-գիւղի մէջ Մանկապարտէզ հաստատած է, նոյն և նմանն ալ Սկիւտարի մէջ ունեցաւ, ի՞նչ մասնակցութիւն ունեցաւ Կեդր. Ուսումն. Խնամակալութիւնն, ի՞նչ օգնութիւն ըրաւ այդ արի և անվհատ կընոջ, որ յօրինեց իր սրբազոյն [illegible] մանուկներու, Քրիստոսի սիրականներու համար, քսակէն ցայսօր ալ դըրամ կը ծախսէ. օր մը չպիտի՞ ըսուի թէ Կովկասցի կին մը, ինքն իր ուժին ու դրամական զոհողութեանց կրթըւած, կրթական նոր դրութիւն բերաւ ի Պոլիս, և Ազգն, իբրեւ անտարբեր ոք, լոկ հեռուէն հանդիսատես գտնուեցաւ։

Ամեն մարդ իր գործին մէջ,— լաւագոյն սկզբունքն այս է. և ասկից պէտք է ճամբայ ելնել։ Մեր անտեսը որուն համար ակնարկեցի, միակն էր իր անտեսութեան մէջ. ամենքս ալ Ճեմարանի մէկ երախտաւորը կը համարէինք զինքը։ Քանիցս տեսած էի, և ամեն անգամ ալ, իր սպիտակ մազերովն ու թառամ մարմնովը, կարեկցութիւնս կը շարժէր։ Կրակէն ետքը մէկ խցիկ ունեցաւ Ճեմարանի փոշիներուն քով, և կարծես թէ այդ անօթոք տարրը խցկան խնայեց անտեսին խնայելու համար։ Այս կերպակէ ալ այդ մարդը գերեզման կը տանէին, դեղուածով պատահեցայ իր դագաղին. իրա՛ւ կ՚ըսեմ որ իր թաղումը մի ճոխ կերպարանք ունէր. գրագէտ, գրասէր, ծերուկ, արհեստաւոր, երիտասարդ, ամեն կարգի մարդիկ կ՚ուղեկցէին իրեն. գոհութեամբ կը տեսնէի որ Տ. Խորէն հայր հոն էր, և մէկ նայուածքով կարելի էր կարդալ անտեսին ցաւը ամեն դէմքի վրայ։ Ո՞վ էր.— մեր Ղուկաս աղբարը։ Կ՚զգայի որ այդ մարդը ինձմէ ալ երախտագիտութեան պէս բան մը կը տանէր իր հետը. յուզուեցայ. զի նա երբեմն մեր մանկութիւնը տեսաւ. մեր կերակուրները կը տաքցնէր, մեր սրահները կ՚աւլէր, մեր դպրոցի դըռները կը բանար ու կը փակէր. իրեն կը յանձնէինք մեր գիրքերը. ինքն եղաւ մեր լաւագոյն անտեսը։ Իսկ երբ կ՚երեւակայեմ որ օր մըն ալ մեր սրահը բերին իբրեւ դաստիարակ, տակաւին այսօր ալ զայրոյթս կը տաքցնէ զիս և փայլակի մը պէս կ՚անցնի վըրայէս։ Ձեր ուշադրութեանը կը յանձնեմ ասոնք, Ամիրէ Տէքթոր, մէկ զայրոյթով ասոնք դուրս նետելով դիտաւորութիւնս եղաւ, խնդրել որ զօրութեամբ միջամտէք մեր դպրոցաց մէջ, թող չտաք որ հոս Ազգին դրամը քմահաճոյից, և միւս տեղ՝ մեր մանուկներու կեանքը հովերու և փոթորկին յանձնուին՝ աշնան ազազուն տերեւներու պէս։ Եւ եթէ չոր դատարկ գլուխներ, դատարկ արարածներ ի պաշտօնէ վաւերացնելով՝ ուսուցչաց, ծրագիրներու և մանկանց գըլխուն վրայ դնէք, մեր կրթարանք Ազգին օգուտ մը չընծայելէ զատ՝ նըւաստութեան ամօթն ալ պիտի գտնեն մեր ճակտին վրայ։

ՀՐԱՆԴ

ԿԻՅԵՕԹԻՆԻ ՏԵՂ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ց. Դուրգէն էֆ. իւր մի գեղեցիկ յօդուածով ճշգրիտ նկարագիրն կը հանէ Թօրհանէի սպանդանոցին, ուր զենլիք ի փողոտման անդ կ՚ենթարկին խիստ տանջանաց։

Ց. Դուրգէն էֆ. վիշտ կ՚զգայ և կը յուզուի ի տես անասնոց տառապանաց, և կը փափաքի որ գիտնական աշխարհն գտնէ միջոց մը աւելի արագահաս գործելու մահն։

Այն նշանաւոր իմաստասէրն իսկ՝ որ չէր ընդունէր, թէ անասունք ունին և կ՚զգան ցաւ, տառապանք, ի գործնականին,—սպանդանոցին մէջ, —պիտի հաւատար, թէ արդարեւ անասունք կզգան ցաւ, թէ անասունք չեն լոկ լարուած մեքենայներ որ կը գործեն, թէ անասնոց ձայներն չեն նմանիր զօղանջմանց զորս զանգակներ կը հանեն, երբ բախին մի առարկայի։

Թէեւ անասունք չունին հոգեկան բարձր կարողութիւններ, թերեւս նոյն իսկ [illegible], բայց չէք ինչ տարակոյս թէ կան յատկութիւններ որք հասարակաց են համայն կենդանեաց— [illegible] և անասուն։

Յօդուածագրին յիշելով անասնոց փողոտման ժամանակ կրած մեծ տառապանքը՝ կը վշտակցի. յիշեցի ես ալ մահապարտն կառափնոցին վրայ։ Դահճապետին դանդաղ շարժմունք, անյաջող հարուածք և պարանաց խըզդմունք կ՚երկարաձգեն մահապարտին տանջանքները որք համեմատաբար սաստիկ են քան զանասնոցն։

Բարեբաղդաբար Ամերիկա առաջինն կը հանդիսանայ լուսաւորեալ աշխարհի մէջ ի մասին վայրկենապէս դադրեցնելու մահապարտին տանջանքներն։

Նոր-աշխարհն ո՛չ պարան կը գործածէ, և ոչ կիյոթին, իւր դահիճն է ելեկտրականութիւն. ո՞վ գիտէ, թերեւս մի օր սովորական բացատրութիւն մը լինի ըսել «Ամերիկայ քանի մը մահապարտներ [illegible]»։

Ց. Դուրգէն էֆ. ի յօդուածն պատեհ առիթ համարելով, միանգամայն տեսնելով որ ցարդ ոչինչ գրուած է Նոր-աշխարհի սոյն համեմատաբար մարդասիրական գործոյն վրայ, կը փափաքիմ փոքր ինչ տեղեկութիւն տալ քաղելով Ամերիկայի մի առաջնակարգ գիտական թերթէ։

Նիւ-Եօրքի նահանգը իրաւամբ կըրնայ պարծիլ, քան որ մի նոր օրինօք կը ջնջէ կառափնարանը և մահապարտները գլխատելու աւելի մարդասէր և գիտական մեթոտ մը կը հաստատէ։ Նիւ-Եօրքի կառավարիչն յունիս 4ին ստորագրեց մի պաշտօնագիր արտօնելով որ մահապարտք ելեկտրականութեամբ սպաննուին։ Սոյն պաշտօնագրոյն տրամադրութեան գործադրութիւնը պիտի սկսի 1890, յունուար 1է և սպանման այս նոր մեթոտն ի գործ պիտի դրուի այս թուականէն վերջ գործուած ոճրոց համար։

Ելեկտրականութեամբ սպանման խնդիրն ընդ երկար հանրային մտածման առարկայ եղած է, այլ Նիւ-Եօրքի նահանգն եղաւ միակ կառավարութիւնը որ ձեռնարկեց այս փորձը գործադրելի ընել։ Հին դրութեան անյաջողութիւնք և բարբարոսութիւնք ապացուցեալ են այն վշտալի, նողկալի տեսարաններով որք յաճախ մեր հրապարակային գլխատմանց յատկանիշներն են։

Այս նոր մեթոտն ուսումնասիրուած է և բազում փորձեր եղած են ընդ հսկողութեամբ մի քննիչ յանձնաժողովոյ։ Ըստ յանձնաժողովոյ, մահապարտն կը նստի կապուած մետաղեայ աթոռի մը որ հաղորդակցութիւն ունի ելեկտրական հոսանաց մի բեւեռին հետ։ Աթոռին յետակողմը կայ գլուխը դնելու մի վայր որ ունի մետաղեայ կապ մը զոր պէտք է մահապարտին ճակատին շուրջը բոլորել։ Սպունգ կամ թաց զգեստներ պէտք է գործածել հաղորդակցութիւնը կատարեալ ընելու համար. յարմար ժամանակին պաշտօնեայն կոճակը կը ճնշէ, և ահա մահապարտը կը մեռնի վայրկենապէս։ Հոսանքը ողնայարի սիւնէն կ՚անցնի և կը յարձակի ուղեղին և ջղային կեդրոններուն վրայ։ Վերակենդանութեան կարելիութեան դէմ ապահով լինելու համար հոսանքը կըրնայ շարունակել քանի մը վայրկեան։

Ենթակային վրայ կատարուած բնախօսական գործողութեան մասին Բրոֆ. Է. Թոմսըն կ՚ըսէ թէ՝ «շատ դէպքերու մէջ մահը արդիւնք է նուաղման և ջղային տկարացման, երբեմն մահը յառաջ կուգայ արեան անօթներուն պայթումէն կամ սրտին դրանակներուն փճացումէն, զի սաստիկ կը կծկին զօրաւոր հոսանաց հզօր ազդեցութեան տակ»։

Ելեկտրական հոսանաց ազդուութիւնն և ազդեցութիւն փորձելու համար կատարուեցան բազում փորձեր ստորին կենդանեաց վրայ յանձնաժողովոյն հսկողութեան տակ։ Մի քանի շանց վրայ կատարուած փորձերուն ընդհանուր կերպն էր հետեւեալը։

Ի ներքուստ զինկով ծածկուած արկղ մը հաղորդակցութեան մէջ դրուած էր ելեկտրական թելով հոսանաց մի բեւեռին հետ. միւս բեւեռը շան գըլխոյն վրայ դրուած մի մետաղեայ գըլխանոցի հետ կապուած էր որ շան բերանէն անցնող պղնձէ կամ երկաթէ կապ մ՚ունէր. երբ կոճակը ճնշեցին, վայրկենապէս մեռաւ շունը. փորձոյ ժամանակ արկղը մասամբ լիքը ջրով լեցուած էր հաղորդակցութիւնն աւելի կատարեալ ընելու համար։

Սրտին գործողութեան վրայ ելեկտրականութեան ըրած ազդեցութիւնը տեսնելու համար, ծակեցին շան մը կուշտը, ուր ներմուծին խողովակ մը որ, արուեստապէս շնչառութիւն յառաջ բերելու համար, փքոցի մը հետ հաղորդակցութիւն ունէր, բացին կուրծքը յորում՝ որոշակի կը տեսնուէին թոքերն և սիրտն որոց գործողութիւնները այժմ կարելի էր դիտել։ Շունը դրուեցաւ արկղին մէջ, որպէս նկարագրուեցաւ ի վերեւ. հոսանքը տրուեցաւ, և սրտին գործողութիւնը վայրկենապէս դադրեցաւ, և ըստ նկարագրութեան դիտողաց, սիրտն էր «շարժուն մսոյ զանգուած մը» ուր սրտին կանոնաւոր շարժման դոյզն նմանութիւնն իսկ չէր տեսնուեր։ Այսպիսի փորձեր կրկնուեցան միեւնոյն արդեամբք, և ոչ մի պարագայի մէջ կարելի եղած էր, արուեստական շնչառութեան միջոցաւ, վերակենդանութիւն յառաջ բերել։

Ըստ նոր օրինաց սպանման օրն և ժամը կը ծանուցուին միայն այն անձանց որք արտօնեալ են ներկայ լինել սպանման գործողութեան։ Ոչ ոք կըրնայ այցելել դատապարտելոյն առանց հրամանի ի դատարանէ, բայց բանտի պաշտօնեայներէն, փաստաբանէն, բժշկէն, քահանայէն և ընտանեաց անդամներէն։

Ց. Դուրգէն էֆ. կրնայ վստահ լինել և մխիթարուիլ թէ՝ ելեկտրականութեամբ մահապարտները սպաննելու մեթոտը պիտի ընդհանրանայ տակաւ, եթէ մահու պատիժը չջնջուի, և ապա կարգը պիտի գայ գործադրելի ընելու միջոց մը որով անասունք նուազ տառապանք կրեն ի սպանման։

Մ. Գ. ՇԱԼԵԱՆ

1889 դեկտ. 8 Գատը գիւղ

Ա. ԼԱ. ՖԻԼԵՕԶ
Նոր վաճառատուն ձեռագործի եւ զգեստի վերաբերեալ ամեն տեսակ պիտոյից
Բէրա, Մեծ փողոց Թիւ 214
Ղալաթա Սէրայի դիմաց

Ց. Ա. Դաւթեան պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան, թէ բաժնուելով իր հին վաճառատունէն՝ որ ի Պոլիս, Մեծ Շուկայ, Նուրի Օսմանիէ՝ այս անգամ փոխադրուած է՝ վերոյիշեալ անուամբ՝ ի Բէրա, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի դիմաց. Այս առթիւ Ց. Ա. Դաւթեան կը ծանուցանէ թէ իւր նոր վաճառատան մէջ ըստ ամենայնի գոհացուցիչ պայմաններով յաճախորդք կրնան գտնել ձեռագործի և զգեստի վերաբերեալ նիւթեր. Մեծ առիթ մ՚է այս ընտանեաց եւ մանաւանդ վարժարանաց համար, որոց վերաբերեալ ամեն տեսակ ձեռագործի նիւթեր մեծ զեղչով կը վաճառուին. Այս վաճառատան մէջ ստեղծագործութեան համար յատուկ գծագրիչ մը կը գտնուի։
954 1—6

ՄԱՐԳԱՐԵԱՆ
ԴՐԱՏՈՒՆ
Կ. Պոլիս Մէրճան փողոց Թիւ 57

Կաղանդի առթիւ Մարգարեան դրատունը պատրաստած է նուէրի համար փառաւորապէս ոսկեզօծ, ՕՐԱՑՈՅՑ մեծ ու փոքր մետաքսեայ և թաւշեայ. ԳԻՐՔԵՐ պատմական և վիպական. ԹԵՐԱԿԱՆ բազմապատկեր ՄԱՆԿԱՆՑ ԳԻՐՔԸ. ԱՅԲԵՆԱՐԱՆԻ ՏՈՒՓ մանուկներու համար. ՊԱՏԿԵՐՆԵՐ խիստ աժան, ներկեալ և աններկ. ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ 45 պատկերով առանց գործիքի ամեն հասակի անձանց արանց և կանանց համար ի գին 5 ղրուշ.
Կը վաճառին ըստ առաջնոյն խիստ աժան. շատ գնողաց մասնաւոր զեղչ.
963 3—6

ՀԱՅ ԹԷՅԱՎԱՃԱՌ
Ց. ԻՍԱՂՈՒԼԵԱՆ և Կ. ՍԱՎՐՈՒՍԵԱՆ
10 Ճելալ-խանպէյ խան կը 10
ՉԻՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ ԵՒ ՀՈԼԱՆՏԱՅԻ
ԸՆՏԻՐ ԵՒ ԱԽՈՐԺԱՀԱՄ ԹԷՅԵՐ
Վաճառատունս իւր հաստատութենէն ի վեր իւր ուղղութեամբ, պատուաւորութեամբ և անխարդախ գործառնութեամբ ստացած հռչակաւ, թէ գաւառներու մէջ և թէ յաստիս խիստ շատ յաճախորդներ գոհ ըրած է։
ՎԱՃԱՌՈՒՄՆՔ
ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ԳԻՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ
949

AU GRAND RABAIS
ՏԻՐԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐՈՒԹԵԱՆՑ
360, Բէրա Մեծ Փողոց, 360
(Սէն Անթուան Եկեղեցւոյ դէմ)

Վաճառատանս գործառնութիւններն այժմ ընդարձակուած եւ մեծերին ատուարացած լինելով, յառաջիկայ ձմրան եղանակին համար յատկապէս Փարիզէն բերել տուած եմք վերջին նորութեանց համաձայն բազմատեսակ ընտիր նիւթեր, ինչպէս շրջազգեստի զանազան կերպասներ, բանուած քօլթիւթներ, կարփէթիւներ, գալմիջներ, ըթի տոս, ֆանթեզի քաղօրներ, հովանոցներ, գօրսէներ ևն։
Վաճառատանս սկզբունքը լինելով ՓՈՔՐ ՇԱՀՈՎ ԸՆՏԻՐ ԱՊՐԱՆՔ ծախել իւր յաճախորդները գոհացընելու և հետեւապէս բազմացնելու համար, կը հրաւիրէ յարգոյ հասարակութիւնն այցելել սոյն «Հայ» վաճառատունն անձամբ համոզուելու համար սոյն ճշմարտութեան։
Այս առթիւ կը ծանուցանեմ նաեւ թէ այլ և այլ ապրանքներ որոց վրայ այլ եւս մտադիր եմք դադրեցնել մեր գործառնութիւններն, «յոյժ աժան» գնով պիտի ծախուին յայժմ հետէ. սոքա են ֆանելա շապիկ, գուլպայ, թաշկինակ, մատամբօլամ վարդագոյն թիւլ քրօշէ եայլն։
12—12 901 ՏԻՐԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Գ. ՄԷՅՖՐ
Ժ. ՏԸԼՈՐՄ, ՅԱՋՈՐԴ
Օ ՎԻԼ ՏԸ ՖՐԱՆՍ
Ղալաթիա, 3, Մահմուտիյէ փողոց
(Գարա-քէօյ)
ՄԵԾ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍ
Ահագին զեղչով
ՁՄԵՌՆԱՅԻՆ ՆԻՒԹԵՐՈՒ

Ամեն տեսակ անձրեւանոցք, գաւազանք, բրդեայ գուլպայք, կօշիկք, պզտիկ աղջկանց համար գուլպայք, ֆլանէլէ ժիլէներ, թրիգօ տաբատներ, մերինոսէ ժիլէներ, կտաւեայ շապիկք, ֆլանէլէ շապիկք, օձիք և թեւնոց, փողպատ, ամեն տեսակ ձեռնոց, մատամբոլ, անկողնի սաւաններու համար կտաւ, բամբակեղէնք, զուտ բրդէ ֆլանելք, ձեռաց սրբիչք, անձեռոցք, թաշկինակք, անկողնի ծածկոցք, անթափանցելի հագուստներ, ուղեւորութեան մնացածներ, հոտաւէտ նիւթեր, խոզանակներ, ալպոմներ և այլն և այլն։
ՍՐՈՇ ԳԻՆ —Ոսկին 108 էն։
Վաճառատան մէջ գտնուած բոլոր ապրանքներուն այս մեծ զեղչի մասին համոզուելու համար կը բաւէ պարզ այցելութիւն մը ի վաճառատունս, ուր պիտի հանդիպի ապրանաց անսովոր յատկութիւնն և ընծայուած առաւելութիւնները։
Ժ. ՏԸԼՈՐՄ
869 Յաջորդ Գ. Մէյֆրէ

ՏՈՔԹ. ՃԻՎԱՀԻՐՃԵԱՆ
Գաւառաց մէջ շատ տարիներ քաղաքային բժշկութեան պաշտօն յաջողապէս վարելէ յետոյ, այժմ Կ. Պոլիս հաստատուած է, և իւր բնակարանն (Ի Վլանկա, Ցանեան Ս. Թորոս եկեղեցւոյ կից.) հիւանդներ կ՚ընդունի Երկուշաբթի, Չորեքշաբթի արտաքին հիւանդութեանց համար, և շաբաթ օր ներքին հիւանդութեանց համար, մինչեւ կէս օր. [illegible] հիւանդաց վրայ վիրաբուժական գործողութիւններն ևս ձրի կը կատարէ. Շաբթուն միւս օրերը մինչեւ կէս օր հիւանդ կ՚ընդունի. Մասնաւորապէս ծննդական գործարանաց հիւանդութիւնք, մանկաբարձութիւն, և վիրաբուժական գործողութիւնք.—քարահատութիւն, խեղաբուժութիւն, լուսնոտութիւն, ևն. որոց վրայ յատուկ փորձառութիւն ունի։
768 9—20

ՄԴՈՒԴԻ ՄՕՒՌԻ ՔԱՆ ՕՃԱՐԱԿ
Եղբայրդ, Կ. Պոլիս, 13 դեկտ. 1888
Պարոնայք Սէրօյ և Պօսէն,
[illegible]
ՏՐ. Ս. Ս. ՄԱՎՐՈՅԵՆԻ ՓԱՇԱ
Բժիշկ Վեհ. Սուլթանին

ԻԼԱՆ

ՕՐՄԱՆ ՎԷՔԱԼԷՍԻՆ ԻՏԱՐԷԻ ՈՒՄՈՒՄԻՅԷՍԻ

Գալլիպոլի տաղը [illegible] վէ 1.282,000 քիլօ [illegible] 1.667,828 քիլօ [illegible] 305 [illegible] 40 կիւն [illegible] 306 [illegible]

14 Քեանունի էվվէլ 305 738

ԻԼԱՆ

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱԻ ՇԱՀԱՆԷ

[illegible]

13 Քեանունի էվվէլ 305
319 3—3

ԲԱՑՈՒՄՆ
ՄԱՅԵՐԻ ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏԱՆՑ
Ի ՊՈԼԻՍ—ԿԱՄՈՒՐՋԻՆ ԳԼՈՒԽԸ
ՊԱՏՐԱՍՏ եւ ՉԱՓԻ ՎՐԱՅ ՀԱՆԴԵՐՁՆԵՐ
ԱՐԱՆՑ, ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ և ՏՂՈՑ ՀԱՄԱՐ
Կ. ՊՈԼՍՈՅ ԱՄԵՆԷՆ ՃՈԽ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
Արանց ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ վերաբերեալ ամեն բանի համար
[illegible] ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ի փոխան համեմատաբար բոլոր ապրանքները կը զանազանուին իրենց ԼԱՒ ՏԵՍԱԿԻՆ, ԸՆՏԻՐ ԿԱՐՈՒԱԾՔԻՆ և ՄՐՑԱՆԵԼԻ ԳԻՆԻՆ.
ՄԱՅԵՐԻ ՎԱՃԱՌԱՏԱՆ ապրանքն եղած է և պիտի ըլլայ միշտ
ԱՂՈՒՈՐ, ԱՂԷԿ եւ ԱԺԱՆ
Երթա՛նք ՄԱՅԵՐԻՆ
827

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Ֆէս Ֆապրիգայի հիւմայունու իչուն եիրմի պէշ պին տանէ չարտօն միւպայաա օլունաճագ. վէ պէհէր ատէտի ալթը փարայա թալիպի եօհտէսինտէ օլուպ թենզիլինէ թալիպ օլանլարըն քեանունի եվվէլին [illegible] սէքիզինճի փազար իրթէսի կիւնինէ դատար մալ-ամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

14 քեանունի եվվէլ 1889 932
Նօ. 26 2—3

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Սրգ Դանտալտօ եիրմի պին մէթրօ, պէհէրի իքի ղրուշ օթուզ փարա։

Թիւյլիւ քէչի տէրիսի եիւզ տանէ, պէհէրի օն իքի ղրուշ։

Թիւյլիւ օղլագ տէրիսի էլլի տանէ, պէհէրի օն ղրուշ։

Գարտիֆ մառէն քէօմիւրի ալթը եիւզ ճէքիսի գանթար. պէհէրի եէդի տէօրթ ղրուշ օթուզ փարա։

Սարօթ թաչթասը տէօրթ պին տանէ, պէհէրի իքի ղրուշ օթուզ փարա։

Փօրսալըք տէօրթ պին տանէ. պէհէրի իքի ղրուշ։

Պէզ Ֆապրիգայի հիւմայունունըն մէվճուտ օլան Փիրուզէ օլունաճագ իւչիւնճիւ նէվ թէլէֆ փամուգը. օն պին քօլօ. պէհէրի էլլի փարա։

Միւպայաա օլունաճագ ալթը գալէմ էշեա իլէ Փիրուզէ օլունաճագ փամուգ թալիպլէրի եօհտէսինտէ օլուպ քեանունի եվվէլին օն սէքիզինճի կիւնինէ դատար ալընաճագ էշեանըն միւնագասասը վէ Փիրուզէ օլունաճագ փամուգըն միւզայետէսի իճրա օլունաճադընտան թալիպլէրին մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

13 քեանունի եվվէլ 1889 931
Նօ. 25 3—3

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ ՑԵՓԻՒՍ

Տ...

Պատիւ ունինք ծանուցանել ձեզ թէ ԱԳՏՈՒԼԼԱՀ ԵՂԲԱՐՑ քով տասն և հինգ տարուան աշխատութենէ և փորձառութենէ յետոյ, Բերայի Մեծ փողոցին մէջ ի թիւ 301 Տըմիւմիւխ Վաճառատան վերև հաստատած ենք Լուսանկարչատուն մը Ցեփիւռ անուամբ։ Այս լուսանկարչատան արդի գիտութեան բոլոր կատարելագործութիւնները պիտի ունենայ։ Աշխատութիւնք տուէթով յառաջ կը տարուին։

Լուսանկարչական արուեստին մէջ մեր երկար փորձառութիւնը, հասարակութեան մեզ շնորհելիք վստահութեան արժանի ընելու մեր հաստատ կամքին միացած, քաջալերական ապագայ մը ցոյց կուտայ մեզ։

Ուստի չենք տարակուսիր, Տ..., թէ մեր կարողութիւնը փորձելէ յետոյ, պիտի յանձնէք մեզ շնորհել ձեր յաճախորդութիւնը։

Ընդունեցէք եայլն։

ՊՕՂՈՍ ԹԱՐԽՈՒԼԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ՏԷՐ-ԱՐՍԷՆԵԱՆ
ԱԼԵՔՍ ԳԱՒԼՃԵԱՆ

35—75
654

ՊԱԶԱՐ ԱԼՄԱՆ

ՆԱՂԱՆԴՆԵՐ

Տօնական օրերու առթիւ, ՊԱԶԱՐ ԱԼՄԱՆ իր բազմաթիւ յաճախորդներուն ուշադրութիւնը կը հրաւիրէ. Պազար Ալման վաճառատանց մէջ ամէն տարուան նման կը գտնուին կաղանդչէքի համար հազար տեսակ առարկաներ բոլորովին աժան գնով, թէ՛ ընծաներու և թէ՛ առօրեայ գործածութեան համար։

ՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ Տղայոց խաղալիկներ, ժամացոյցներ, Պզտիկ կարասիներ, Տղայոց համար կառքեր, կարասիներ, Ծննդեան ծառի համար զարդեր, չեծելանիւներ, լամբարներ, Նկարներու և խաղացողներու համար առարկաներ, Արդուզարդի և կարի պահարաններ, Գրասենեկի պիտոյք, կազմածք, Քաքախմբաք, Շաքարեղէնք, առժամեայ և նիքելէ ապաներ թէյի և խահուէի համար, Հրատեսակ նիւթեր, փողպատներ, Անձրեւանոցներ, ձեռնոցներ, կօշիկներ, Գրասեղաններ, Ձեռագործներ, Պաշիքրայի գործերու չէչով և հազար ուրիշ տեսակ առարկաներ։

Ժամացոյցներուն գինը տարօրինակ կերպով աժան է։ 960 4—12

ԴԵՂ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻՑ

Տօքթօր Այէրի ջերմային հիւանդութեանց այս դեղը՝ որ անխառն բաղադրութիւն մ'է զուտ բուսեղինաց, է դառնահամ և այդու կազդուրիչ ամէն տեսակ Ֆիզիքական խանգարմանց, որ յառաջ կուգան ճահճախառն վայրերու ջերմոտ կլիմայից փառ ու ապականեալ օդերէն, որուն օգտակարութիւնը և ապաքինիչ առոյգ յատկութիւնը երաշխաւորեալ է նորա անհամեմատ արդեանց ստոյգ գիտութեամբն։

Այս Ֆիզիքական խանգարումներն յառաջ կուգան օդին մէջ լողացող թունաւոր անհշմարելի նիւթոց միջոցաւ, որք թոքերէն անցնելով կը մտնեն արեան մէջ, կը խանգարեն լեարդը, և յառաջ կը բերեն ամէն տեսակ ջերմեր և տենդեր, և արեան թունաւորումը, որոց աս անուններն տրուած է. ջերմն և սարսուռ, թագուն ջերմ, պարբերական ջերմն, բռնկաւոր ջերմն, մաղձային տենդ և հրաւառ տենդեր։

Թունաւորեալ օդէն առաջացեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր ամէնօրեայ աղտոտութիւն, կամ թունաւորեալ է ճահիճներէ կամ ճահճախառն վայրերէ բուսեալ ժահահոտ նիւթերով, կամ քաղաքի աղտոտ [illegible] և [illegible] թունաւոր կազերով, որոց մարդիկ կը ծծեն շնչառութեամբ։

Այէրի ջերմի ու տենդից դեղը կը ջնջէ այդ թունաւոր նիւթոց կամ կազերու ազդեցութիւնը և զայն կը հանէ մարմնոյն մէջէն, որոյ գործածութիւնն [illegible] և անվնաս է և օգտակար [illegible] հաստատեալ [illegible]։ Կը ծախուի Միացեալ և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ։ 166

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

[illegible] Լիվերփուլ և Նիւ-Եորք [illegible]

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ումպրիա	7718	Գադալոնիա	4841
Էդրուրիա	7718	Պոթնիա	4535
Սերվիա	7391	Սամարիա	2574
Օրանիա	7268	Մարաթոն	2403
Բավոնիա	5587	Աթլաս	2393
Ցեֆալոնիա	5517	Սարակոսա	2166
Կալլիա	4809	Թարիֆա	2246
Սկիթիա	4557	Պալմիրա	2144
Ալէփփօ	2143	Թրինիտատ	1899
Քէտար	1876	Մարոքքօ	1855
Շէրպուրկ	1614		

Դիմել առ ԹՈՄԱՍ Ք. ՃՈԼԻ գործակատար
Thomas C. Joly
Թիւ 1, Քիւչիւք Հալիլ փաշա խան,
910 Ղալաթիա

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ԼՈԳԱՐԱՆՆԵՐՆ ՀԵՇՏԱԲՈՅՐ ԿԸ ԽՆԿՈՒԻՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆՈՅՇԱՀՈՏ ԱՂԵՐՈՎ

Լոգարանի եւ արդուզարդի համար



Այս աղերն, առողջապահական մեծ յատկութիւններ ունենալով, շատ անուշ կ'ընեն ջուրն և հեշտաբոյր հոտ մը կուտան նմա։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՆՈՅՇԱՀՈՏ ԱՂԵՐԸ անհաման ազդեցութիւն ունին գեղեցկութեան և առողջութեան համար մորթը, թարմութիւն ընծայելով զայն, և գոյնին տալով գեղ ու թարմութիւն։

Արեւելեան Անուշահոտ Աղերը գործածելու ՀԻՒԱՆԴԱՑ ՍԵՆԵԱԿԻՆ ՄԷՋ, զի կը նպաստեն օդը զտելու և հաճոյ են հասարակութեան։

Այս աղերուն հակաճեխական յատկութիւնները շատ օգտակար են մարմնի հիւանդութեանց։

Ս. ԹՈՒՄԱՍՕ և ԸՆԿ. 27. Ձիւնի Սթրիթ Լոնտոն

Դիմել առ միակ գործակալն ի Թուրքիա

ԷՏՄՈՆՏ ԴԱՐՈՒԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԱՆԳԼԻԱԿԱՆ, պահակատան դէմ, կայարան Ղալաթիա-Թիւնէլի Թրամուէյից, Թիւ 95 և 97, Ղալաթիա։ 681

ԱՄԵՆ ՕՐՈՒԱՆ ԻՒՂԷՆ ԱՆՀԱՄ ԵՒ ԱՆՀՈՏ

HUILE DE HOGG

ՄՈՐՈՒ ՁԿԱՆ ԲՆԱԿԱՆ ԻՒՂ

Որոյ ազդուութիւնն հաստատուած է 25 էն աւելի տարիներու փորձովք հետեւեալ հիւանդութեանց համար. կուրծքի հիւանդութիւն, Թոքախտ, Թոքատապի հիւանդութիւն, Հազ, յամառ հազ, խոյլ, աւշային գեղձերու ուռոյցներ. մորթի հիւանդութիւնք, սրքեւն, սպիտակ գաշտան, ընդհանուր տկարութիւն եայլն։ Նաև տկար և փափկակազմ տղաքները զօրացնելու համար շատ դիւրաւ կը խմուի։

Օգտակարութիւնը է ամբողջական իւղերէն և մանաւանդ անոնցմէ որ չահաւէտական նպատակներով բնական իւղերու տեղ և երբեմն անոնցմէ աւելի ազդուութեան և անհոտ համ տալու համար շինուած են։ Այն իւղերն ուրիշ կերպով չեն ճառայեր բայց միայն սաստիկ մաքրել ու շփոթելու և հոգնեցնելու. երբեմն շատ վտանգաւոր ալ կրնան ըլլալ։

Բնական և զուտ ձկան իւղ ունենալու ապահովութեան համար պէտք է գնել ՀՕԿԻ ԻՒՂԸ, որ եռանկիւնի շիշերով կը ծախուի։ Պահանջել հօկի անունը և Բարիզի բժշկական ճեմարանին քիմիական գործոց պետ Պ. Լըպէօֆի վկայութիւնը որ իւրաքանչիւր շիշի էթիգէթին վրայ կը գտնուի։ Տէկլա Ստամպուլի և այլ Պոլսոյ համբաւաւոր դեղագործներն կը գտնուի։

1883 տարւոյ յունուար 1 էն սկսեալ հօկի մորու ձկան բնական իւղի շիշերուն էթիքէթներուն վրայ Գաղղիոյ կառավարութեան կնիքն պիտի գտնուի, ուրեմն այս մասին ուշադրութիւն ընելու է։

Ծախուին ամէն դեղավաճառաց քով Վ. Գ. ՏԱՄՉԱՕ, Պօլիս 693

ԼԱ ՌՈՒԱՆԷԶ

LA ROUENNAISE

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՀԻՄՆԵԱԼ Ի 1837

Կեդրոնատեղի՝ 18, Սէն-Մառք փողոց, Բարիզ

Դրամագլուխ, 4,000,000, Վճարեալ վնասներն իբր 30,000,000

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել ի գրասենեակս ընդհանուր գործակալութեան, Ղալաթիա, Մահմուտիէ փողոց, Թիւ 2, Ճերեմեան խան, Գամմոտայի Պանդալյին դիմաց։

Ընդհանուր գործակալք բովանդակ Թուրքիոյ և Յունաստանի
ՍԻՄՈՆ ՔԱՑԷԼԵԱՆ և ԸՆԿ.

186

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՆԱԼԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիայէ և Պոլսէ [illegible]

Բարիզ Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնլով,
Ա. կարգ 300 Փրանք
Բ. » 220 »

[illegible]

Նաւուղեւորի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՄՈԹԷ ՌԸՊՈՒԼ
Թիւ 47-48 Քիւչիւք Միլլէթ
Մումհանէ փողոց, Թիւ 14

371

ՍԱԼԻՀ ՍԸՏԳԸ

ՊՈԼԻՍ, ՍՈՒԼԹԱՆ ՊԱՅԱԶԻՏ, ՕՏՃՈՒԼԱՐ ՊԱՇԸ ԹԻՒ 61

Արանց, կանանց և տղայոց համար ամէն կարգի գեղեցիկ ու գիմացկուն կօշիկներ կը պատրաստուին Ֆրանսական առաջնակարգ ապրանքներէ։ Այս խանութը գիմող յաճախորդք մեծապէս գոհ պիտի լինին մանաւանդ գներու աժանութենէն։ 2 թիւէն 4 թիւ կօշիկներու կարով պատրաստուածները հինգ ղրշ աւելի պիտի ըլլան փայտէ գամով պատրաստուածներէն։ 4 թիւէն 6 թիւի համար 5 ղրշի յաւելում մը պիտի ըլլայ այդ տարբերութեան վրայ։

Ղրշ	տեսակ	Ղրշ	տեսակ
85	ամէն տեսակ կարով պոթին կալոշ	33	կնոջ մուճակ
52	սկարբին կարով	40	պալատական կալոշ
140	կալոշով մոյկ կարով	70	կնոջ համար պոթին կալոշ
65	պոթին կարով	45	16 թիւէն մինչ 21 թիւ պոթին կալոշ տղայոց համար
80	մէտտ կալոշ գամով	150	թէլաթին և ուղտի մորթէ մոյկ
140	ամէն տեսակ մոյկ		
160	փայլուն մորթէ մոյկ		

Տղայոց յատուկ կօշիկներու 21 թիւէն վեր եղածներուն համար հինգ ղրշի յաւելում մը պիտի ըլլայ։ Ցանկալի յանձնարարուած կօշիկներու համար հարիւրին տասը յաւելում մը պիտի ըլլայ այս գնոյն վրայ։ 966 1—24

"ՖՕՐԹՈՒՆԱ"	"ՏԻՒՍԷԼՏՕՐՖԷՐ"
Ընդհանուր ապահովագրական Անանուն Ընկերութիւն	Ծովային, Գետային եւ Ցամաքային ընդհանուր ապահովագրական Ընկերութիւն
Հիմնեալ ի Պերլին յԱմին 1868	Հիմնեալ ի Տիւսէլտորֆ, 1845
Դրմգլխ. 1,875,000 Ֆր.	Դրմգլխ. 3,750,000 Ֆր.
Պհեստ. դրամ 1,337,000 »	Պհեստ. դրամ 3,099,367·45

Ընկերութիւնքս որք միացեալ են Կ. Պոլսոյ հրապարակին վրայ, փոխադարձ երաշխաւորութեամբ կ'ապահովագրեն ամէն տեսակ վաճառք և դրամամթերքներ, ընդդէմ Ծովային, գետային և ցամաքային փոխադրութեան վտանգաց, խիստ չափաւոր պայմաններով։

ՀԱՆԶԷԱԹԻՇԷ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Հիմնեալ ի Համպուրկ յԱմին 1874
Դրամագլուխ 3,750,000 Ֆր
Պահեստի դրամ 600,000 »

Ընկերութիւնս կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի ամէն տեսակ կալուածներ, կարասիք, մթերանոցներու և վաճառատանց մէջ ապրանքներ, ամենաչափաւոր պայմաններով։ 583

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ ուզողներ կը հրաւիրուին դիմել առ ՏԻՐԱՆ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ, ընդհանուր գործակալ վերոյիշեալ երեք ընկերութեանց. ի Պոլիս, Պաղչէ-Գափու Բահիմ Փաշա խան, թիւ 13 և 14։

Coleman's
Liebig's
Extract of
MEAT & MALT
WINE
HUNDREDS OF TESTIMONIALS HAVE BEEN RECEIVED FROM MEDICAL MEN

ԳՈԼԻՄԸՆԻ ԳԻՆԻՆ հեշտահամ և կազդուրիչ ըմպելի մ'է, բաղկացեալ Բորդոյի գինիէ, և Լիէպիկի մսի հիւթէ և Մալթի հիւթէ, կազմելով ախորժաշարժ, զօրաւոր և գրգռիչ խառնուրդ մը, որ թէ առողջ և թէ տկար մարդոց համար լաւ է հաստատուած։

Բժշկական համալսարանն հաւանած է նմա և բազմաթիւ նշանաւոր բժիշկներէ յանձնարարեալ է. ՀԱԶԱՐԷ ԱՒԵԼԻ ԲԺԻՇԿ գրած են իրենց վկայութիւններն. Ահա կը թարգմանենք վկայութիւնն մը

Թ. ՐԷՃԻՆԱԼՏ ՃՈՆՍԸՆ Մ. Ր. Ս. Ս. Լ. Լ. Մ. Ք. Ս. Ր. Ճ. ԵՒ ԸՆԿ.

26, Լարն Րոտ և 24 Համիլթըն Սգուէյր

Պռլնհէմ, 2 սեպտեմբեր 1889

Պարոնայք.— [illegible]

Ընդունեցէք, և այլն և այլն.

Թ. ՐԷՃԻՆԱԼՏ ՃՈՆՍԸՆ

Ի վերջոյ, [illegible] յանձնարարած եմ զայն։

Հարցնել ԳՈԼԻՄԸՆԻ ԳԻՆԻՆ Լիէպիկի մսի և Մալթի խառնուրդով, զգուշանալ կեղծերէն։

Դիմեցէք [illegible], միակ գործակալ ի Թուրքիա Գոլիմըն և ընկերութեան գործարանին Ս. Ճօրճ Նորուիչ և Լոնտոն։

ԷՏՄՈՆՏ ԴԱՐՈՒԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԱՆԳԼԻԱԿԱՆ, պահակատան դէմ, կայարան Ղալաթիա-Թիւնէլի Թրամուէյից. Թիւ 95 և 97, Ղալաթիա 80

EMULSION SCOTT



(ՍԳՈԴԻ ՕՃԱՌԱԿ)

ՄՈՐՈՒ ՁԿԱՆ ԶՈՒՏ ԻՒՂ

Հիփոֆոսֆիթ կրոյ և սոտայով

Պատրաստեալ ձեռամբ ՍԳՈԴԻ և ՊՕՈՒՆԻ, ի Նիւ-Եորք։

Կաթին չափ ախորժահամ է

Մորու ձկան հում իւղի բոլոր յատկութիւններէն զատ, հիփոֆոսֆիթներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ծռացածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Գործակալութիւն ի Կ. Պոլիս. ՀԱՄՄԷՐ ԵՒ ՀԻՐՇԼ. 4

ԵԹԷ ԿԸ ՀԱԶԱՔ

ԱՌԷՔ ՄԻԱՅՆ
ԺԷՐՕՏԷԼԻ ՊԱՍԴԻՅԼՆԵՐՆ

ՆՈՐՎԵԿԻԱՅ ՄԱՔՈՒՐ ԽԵԺԴԱՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

Որք ծծուելով եւ ուտուելով կը ներգործեն ընդդէմ Հարբուխի, Պրոնշիդի, Դուլի, Շնչարգելութեան, Ձայնի կերկեման, Խուչակատարի եւլն. Ամեն բժիշկք կը յանձնարարեն ժէրօտէլի պասդիյլներու գործածութիւնն եւ կ'արգելուն գործածել խայծղանի այլ եւ այլ շաքարահատերէն

ԱՆՊԱՏԵՀՈՒԹԻՒՆՔ
Խայծղանի շաքարահատերու

1. ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹԻՒՆ, ուտելիք իրենց խայծղանի կարգը և անլուծելի ղանագան աղերն որք բերնին մէջ չլուծուելով կ'իջնան ստամոքսը կ'իջնան, առանց դղղի ինչ խայծղան հաղորդելու շնչառական խողովակաց որոց սահմանեալ են.

2. ԽՈՂՈՎԱԿԻՆ ԾԱՅՐԵՆ խայծղանի հատիկները կը մտնեն ստամոքսի մէջ և զայն բեռնաւորելով շաքարով և խէժային նիւթերով, յառաջ կը բերեն ստամոքսի անհանգստութիւններ.

3. ԱՂԻՔՆԵՐՈՒՆ մէջ կը չարունակուին այս հատիկներուն պատճառած անհանգստութիւնք և յառաջ կը բերեն Բերբերում, Վէրք, Խիթ, եւլն. իրենց պարունակած ափիոնի, մորֆինի պատճառաւ.



ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՔ
Ժէրօտէլի պասդիյլներու

Ա. ՇՆՉԱՓՈՂԵրուն մէջ ժէրօտէլի պասդիյլներու գոլորշին, ներքը մեծապէս կը ներգործեն իրենց առողջարար և կազդուրիչ յատկութեամբ, քանի որ կը շնչուին ու կը ծծուին։

Բ. ԹՈՔԵՐՈՒՆ մէջ մէկ մի շնչառութեան կը հասնին ժէրօտէլի պասդիյլներու գոլորշիներն և բնականապէս տարածուելով անմիջապէս ի գործ կը դնեն իրենց փրկաւէտ ազդեցութիւնը.

(Բարիզի բժշկաց ն ամենէն նշանաւոր [illegible], կ'ըսէ թէ Օ. բիժ [illegible] կը խօսի պասդիյլներու վրայ. «Պ. ժէրօտէլ պարզ միջոց մը գտած է խայծղանը մտցնելու համար շնչափողերու ամենէն նուրբ թելերուն մէջ, առանց պարունակելու փսասակար նիւթեր։ Այս պայմաններով, խայծղանին ազդեցութիւնն այնքան արագ է որ քանի մը Բասդիյլներ կը բաւեն հազը դադրեցնելու։»)

ԺԷՐՕՏԷԼԻ ԲԱՍԴԻՅԼՆԵՐՆ անհրաժեշտ են ամէն անոնց որք մարմիններին կը յոգնեցնեն, որոնց օդի մէջ կ'աշխատին կամ իրենց պարապմանց պատճառաւ ստիպուած են զրուցելու գոռալու կամ փողեր ծծել, ինչպէս Դերասանք, Ջութակահարք, Կառավարք, Երգիչք, Դերասանք, Ատենաբանք, Քարոզիչք, Փաստաբանք, Ուսուցիչք, Գաւառական, Երկաթուղեաց Պաշտօնեայք եւ եւ.

Տարին 100.000է աւելի մարդիկ կը բժշկուին այս Բասդիյլներով եւ Պ. Ժէրօտէլ 40.000է աւելի շնորհակալեաց նամակ ունի.

Ժէրօտէլի Բասդիյլներն են խայծղանի մէկ պատրաստութիւնքն որք փորձառուած են Փարիզու 1878ի Տիեզերական ցուցահանդէսին կողմէ, նախարարական որոշմամբ և ըստ խորհրդոց Առողջապահական խորհրդոյ՝ վաւերացեալ են, և Ռուսիոյ մէջ թոյլատրեալ են կայսերական կառավարութեան կողմէ, ըստ հաւանութեան բժշկական խորհրդոյ։

[illegible] 72 Բասդիյլ [illegible]

Պ. ԺԷՐՕՏԷԼ, դեղագործ ի Սէն-Մէնէուլ, (Ֆրանսա)

Կ. Պոլիս՝ Պ. Մարշէ. Դեղագործական Մթերանոցն, Ն. և Ժ. Բանզուքէ եղբարք, Թիֆօս, Նէտալոր, Թէտորիտէս, Վէհեան Քառասգեան, Տ. Մ. Մէզիքի, Ա. Գատարքիտէս, Ա. Քէզորփիտէս, Կէտորքոս, և Ընկ. 696

ՔԱՈՒՉՈՒԷ ՄՈՒՃԱԿ

(ԼԱՍՏԻՔ)

ՀԱՆՐԱՄԱՆՕԹ ՆՈՐԹՀ ՊՐԻԹԻՇ ՌԻՊԸՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մեր յաճախորդներու փափաքանաց համաձայն, մեր այս տարուան քաուչուէ մուճակներն, որք իրենց վրայ իբրեւ նշան կշիռ մը կը կրեն, խիստ ճաշակաւոր, նուրբ և հաստատուն շինուած են [illegible]։

Պոլսոյ հրապարակին վրայ երկար ատենէ ի վեր ճանչցուած է թէ մեր քաուչուէ մուճակները կը գերազանցեն քան տարիէ ի վեր գործածուած բոլոր մուճակները։

Մեր մուճակներու ներքին կողմը կշիռ մը և արտաքին կողմն ալ առիւծի մը պատկերը դրոշմուած է իբրեւ նշան։ Կը վաճառուին ի Պոլիս Սուլթան Համամ աղբիւրի մօտ Սեպուհ աղա Տէմիրճեանի թիւ 47 և 49 խանութն և բոլոր քաուչուէ մուճակ վաճառողներու քով։ Կեդրոնատեղին է ի Պոլիս, Պահճէ Գափու, Գոճաման Օղլու խան, Ծորճի Կիտրոյի թիւ 13 մթերանոցը 837

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻՅԷ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

1686

1889 ՆՈՅԵՄԲԵՐ 2 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ ՄԻՆՉԵՒ ՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

[illegible]

2 15 Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիք.
2 15 Վանիք. Չէնկէլ. Պէյլէր. Գուզգ. Պէշիք.
1 15 Ենիմ. Մէզ. Պէյքօզ. Թար. Ենիք. Միրկ. Ռ. Հիսար Պէպէք Արնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիկթաշ
2 20 Պէյք. Բաշղաբ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզգ.
2 50 Ռ. Ա. Գավաք Մէզարպ. Պէյքօզ. Թարբ. Պէյքօզ Բաշղաբ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզգ. Պէշիկթաշ
3 15 Ենիմ. Մէզարպ. Պէյքօզ Թարապ. Ենիք. Ստէն. Միրկ. Պալթ. Ռ. Հիսար Պէպէք Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիք.
4 — Մէզպ. Պէյքօզ. Թարբ. Պէյքօզ Բաշղաբ. Չուպ. Գանլըճ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկէլ. Պէյլ. Գուզգ. Իւսկ.
4 45 Ենիմ. Մէզպ. Պէյքօզ. Թարբ. Ենիք. Ստէն. Միրկ. Պալթ. Ռ. Հիսար Պէպէք Արնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիկթաշ
5 15 Պէյքօզ Բաշղ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկէլ. Պէյլ. Գուզգ. Պէշիք.
6 — Ենիմ. Մէզպ. Պէյքօզ Թարբ. Ենիք. Ստէն. Միրկ. Պալթ. Ռ. Հիսար Պէպէք Արնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիք.
7 — Ենիմ. Մէզարպ. Պէյքօզ. Թարապ. Պէյք. Բաշղաբ. Ենիք. Միրկ. Գանլըճ. Ռ. Ա. Հիսար Գանտ. Արնավ. Չէնկէլ. Պէյլ. Օրթ. Գուզգ. Պէշիք. Իւսկ.
8 15 Ա. Ռ. Գավ. Մէզպ. Պէյքօզ. Թարբ. Ենիք. Ստէն. Միրկէն Ռ. Հիսար Պէպէք. Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիք.
9 — Մէզպ. Պէյքօզ. Թարբ. Պէյքօզ. Բաշղ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզգ. Իւսկ.
10 — Մէզպ. Պէյք. Թարբ. Ենիք. Միրկ. Ռ. Հիսար Արնվ. Օրթ. Պէշիք.

[illegible]

3 — Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Պէպէք Ռ. Հիսար Միրկ. Ենիք. Թարբ. Պէյք. Մէզ. Ենիմ.
3 35 Գալաթ. Իւսկ. Պէշիք. Գուզգ. Օրթ. Պէյլ. Չէնկէլք. Արնավ. Գանտ. Ա. և Ռ. Հիսար Գանլըճ. Միրկ. Ենիք. Բաշղ. Պէյք. Թարբ. Մէզարպ. Ենիմ.
3 50 Իւսկ. Գուզգ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլ. Չուպ. Բաշղ. Պէյքօզ.
4 15 Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Պէպէք Ռ. Հիսար Պալթ. Ստէն. Ենիք. Թարբ. Պէյքօզ. Մէզպ. Ենիմ.
5 15 Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ. Պէպէք Ռ. Հիսար Միրկ. Ենիք. Թարբ. Պէյքօզ. Մէզ. Ենիմ. Ռ. Ա. Գավաք
6 15 Գալաթ. Իւսկ. Պէշիք. Գուզգ. Օրթ. Պէյլ. Արնավ. Ռ. Հիսար Միրկ. Ենիք. Թարբ. Պէյք. Մէզարպ. Ենիմ.
8 15 Պէշիք. Իւսկ. Գուզգունճ. Օրթաք. Պէյլէր. Չէնկէլ. Արնավ. Գանտ. Ա. և Ռ. Հիսար Միրկ. Ենիք. Թարբ. Պէյքօզ. Մէզ. Ենիմ.
8 30 Պէշիքթաշ Օրթ. Արնվուտ. Պէպէք Ռ. Հիսար Միրկ. Ենիք. Թարբ. Մէզպ. Պէյք.
10 5 Իւսկ. Գուզգ. Պէյլէր. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլըճ. Չուպուգլը Բաշղաբ. Պէյք. Թար. Մէզ. Ռ. և Ա. Գավաք.
10 15 Պէշիք. Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք Ռ. Հիսար Միրկ. Ստէն. Ենիք. Թարապ. Պէյք. Մէզարպ. Ենիմ.
11 — Պէշիք. Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք Ռ. Հիսար Միրկէն Ենիք. Թարբ. Պէյք. Մէզարպ. Ենիմ.
11 10 Գուզգ. Պէյլէր. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլըճ. Չուպ. Բաշղաբ. Պէյք.
11 30 Պէշիք. Գուզգ. Օրթ. Պէյլէր. Չէնկ. Վանիք.
12 — Պէշիք. Օրթ. Գուր. Արնվ.